

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

<b>ՆՊԱՏԱԿ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ</b>		
<b>Ռազմավարական ուղղություններ՝</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերի ստեղծում</li> <li>• Արդարադատության ոլորտի մարմինների էլեկտրոնային համակարգերի լրամշակում</li> <li>• Արդարադատության նախարարության ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացում կամ արդիականացում</li> </ul>		
<b>Վերջնական արդյունք</b>	<b>Միջանկյալ արդյունքներ</b>	<b>Ուղղակի արդյունքներ</b>
Դատական պաշտպանության իրավունքի, արդարադատության ոլորտի մարմիններին և Արդարադատության նախարարությանը վերապահված հանրային գործառույթների արդյունավետ և մատչելի իրականացումը առավելապես երաշխավորված է	<p>1. Ներդրվել և գործարկվել են «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերը, ներառյալ՝ հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգը</p> <p>2. Ներդրվել կամ բարելավվել են իրավապահ համակարգի, հարկադիր</p>	<p>1.1. Քաղաքացիական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p> <p>1.2. Սնանկության վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p> <p>1.3. Վարչական վարույթի շրջանակներում իրականացվող դատական</p>

	<p>կատարումն ապահովող ծառայության, քրեակատարողական ծառայության, պրոբացիայի ծառայության ծրագրային ապահովումները</p> <p>3. Թվայնացվել կամ արդիականացվել են ազգային արխիվի, պետական ռեգիստրի (ներառյալ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի), հաշտարարության ինստիտուտի և նոտարական գործունեության տարբեր գործառույթները</p>	<p>գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p> <p>1.4. Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p> <p>1.5. Դատական վիճակագրական տեղեկատվությունը ստացվում է առցանց ռեժիմում</p> <p>1.6. Հանրությանը հասանելի դատական վիճակագրական տվյալների թիվն ավելացել է շուրջ 30 տոկոսով</p> <p>1.7. Հայաստանում գործող հաշտարարների 100 տոկոսը գրանցված են հաշտարարների էլեկտրոնային ռեեստրում</p> <p>1.8. Արդարադատության նախարարությանը կողմի դիմում ներկայացնելու դեպքում կամ դատարանի կողմից պահանջագիր ներկայացնելու դեպքում հաշտարարի նշանակման կամ հաշտարարի թեկնածուի ընտրության և դատարանին ներկայացման դեպքերի 100 տոկոսը իրականացվում են էլեկտրոնային համակարգի միջոցով</p> <p>1.9. «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգը գործարկվել է, որի միջոցով ապահովվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը</p>
--	--	--

		<p>դատական, իրավապահ, իրավակիրառ մարմինների (Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, Քրեակատարողական ծառայություն, Պրորբացիայի ծառայություն), ինչպես նաև այլ մարմինների և պաշտոնատար անձանց միջև</p> <p>1.10. Դատական գործերի առնվազն 50 տոկոսը բաշխվում և մակագրվում է կատարելագործված էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հաշվի առնելով դատավորի ծանրաբեռնվածությունը և գործի բարդությունը</p> <p>1.11. Դատական ակտերի 100 տոկոսը հրապարակվում է կատարելագործված դատական ակտերի պաշտոնական հրապարակման համակարգում</p> <p>2.1. Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի տեխնիկական հնարավորությունները համապատասխանեցվել են արդի պահանջներին և անհրաժեշտ հրապարակային ծանուցումների 100 տոկոսը տեղադրվում է արդիականացված կայքէջում</p> <p>2.2. Պրորբացիայի ծառայության փաստաթղթաշրջանառությունը և ժամկետները կրճատվել են առնվազն 20 տոկոսով</p> <p>2.3. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային հարթակի և այլ գերատեսչությունների հետ</p>
--	--	---

		<p>անհրաժեշտ կապուղիների անխափան աշխատանքի արդյունքում փաստաթղթաշրջանառության համար պահանջվող ժամանակահատվածը կրճատվել է առնվազն 30 տոկոսով</p> <p>2.4. Կատարողական վարույթի մասնակիցների անձնական տվյալների և ծառայության թվային շտեմարանի հնարավոր կորստի կամ արտահոսքի ռիսկերը առնվազն 50 տոկոսով նվազեցված են</p> <p>2.5. Կատարողական վարույթի շրջանակում ծախսվող ֆինանսական ռեսուրսները կրճատվել են առնվազն 10 տոկոսով</p> <p>2.6. Ապահովվել է կատարողական վարույթի կողմերի համար կատարողական վարույթին առնչվող տեղեկատվության և փաստաթղթերի առնվազն 80 տոկոսի թվային հասանելիությունը</p> <p>2.7. Առնվազն 50 տոկոսով ընդլայնվել է էլեկտրոնային եղանակով իրականացվող կատարողական գործողությունների շրջանակը</p> <p>2.8. Կատարողական վարույթի շրջանակներում առնվազն 30 տոկոսով ընդլայնվել է ծանուցման էլեկտրոնային գործիքակազմը, կատարելագործվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործիքները</p>
--	--	--

		<p>2.9. Առնվազն 50 տոկոսով ընդլայնվել է կատարողական վարույթների անձնական էլեկտրոնային գրասենյակի օգտատերերի շրջանակը</p> <p>2.10. Քրեակատարողական հիմնարկների էլեկտրոնային համակարգի առնվազն 40 տոկոսը արդիականացվել է</p> <p>2.11. Ստեղծվել է էլեկտրոնային միջավայր, որի միջոցով իրականացվում է մինչդատական քրեական վարույթը</p> <p>2.12. Նվազեցվել է քրեական գործերի քննության ծախսատարությունը, դրա ընթացքում սխալների, թերությունների, բացթողումների հնարավորությունը, բարձրացվել է արդյունավետությունը</p> <p>3.1. Գործում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության արդիականացված էլեկտրոնային e-register համակարգը, որի արդյունքում 20 տոկոսով աճել է էլեկտրոնային համակարգի միջոցով իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցումը</p> <p>3.2. Գործում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության թվային արխիվը, թվայնացվել է փաստաթղթերի առնվազն 60 տոկոսը</p> <p>3.3. Ազգային արխիվ հարցումների և դրանց պատասխանների առնվազն 20 տոկոսը տրամադրվում են e-request հարթակի կամ դիմումատուի էլեկտրոնային փոստի միջոցով</p>
--	--	---

		<p>3.4. Նախատեսվել է ապրանքի ապահովվածառքի պայմանագրերի՝ նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ վավերացնելու հնարավորություն նախատեսող համակարգ՝ ապահովելով դրանցից ծագող պարտավորությունների հարկադիր կատարման դեպքում կատարողական մակագրության թերթերի էլեկտրոնային եղանակով տրամադրումը</p> <p>3.5. Միակողմանի գործարքների 20 տոկոսը նոտարների կողմից վավերացվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով</p>
--	--	--

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2023 թվականի 3-րդ եռամսյակ		
<p>1. Մշակել, ներդնել և գործարկել «էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քաղաքացիական</p>	<p>Ներկայումս առկա չէ էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ: Սակայն, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և մատչելի իրականացումն ապահովելու համար</p>	<p>Մշակվել և ներդրվել է «էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քաղաքացիական գործերով էլեկտրոնային մոդուլը</p>	<p>1.1. Քաղաքացիական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p>	<p>«էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քաղաքացիական գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկվել է</p>

գործերով էլեկտրոնային մոդուլը	անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ (e-justice), որը իր մեջ կներառի քաղաքացիական գործերով էլեկտրոնային մոդուլը: Ներկայումս գործարկվել է միայն համակարգի վճարման կարգադրություն մոդուլը		1.2. Քաղաքացիական դատավարական առնվազն 5 գործողություն (էլեկտրոնային հայցադիմումների, հակընդդեմ հայցերի, էլեկտրոնային պատասխանների, ապացույցների, միջնորդությունների ներկայացում) իրականացվում է էլեկտրոնային եղանակով	
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 500 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 3-րդ եռամսյակ</b>		
2. Մշակել, ներդնել և գործարկել «էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական	Ներկայումս առկա չէ էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ: Սակայն, դատական պաշտպանության իրավունքի	Մշակվել և ներդրվել է «էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի	2.1. Սնանկության վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների	«էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի սնանկության գործերով

<p>համակարգի սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը</p>	<p>արդյունավետ և մատչելի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ (e-justice), որը իր մեջ կներառի սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը: Այս պահին սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլի մշակման նպատակով հաղթող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր, և կազմակերպությունը, արդեն իսկ, իրականացնում է մոդուլի մշակման աշխատանքները</p>	<p>սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը</p>	<p>առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p> <p>2.2. Սնանկության մոդուլը ներդրվել է, որը հնարավորություն է ընձեռել ապահովել դիմումների և այլ փաստաթղթերի ներկայացումը դատարանին, սնանկության կառավարչին և վարույթի մասնակիցներին, փաստաթղթերի և սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության առցանց հասանելիությունը, իրականացնել էլեկտրոնային ծանուցումներ, կազմակերպել սնանկության կառավարիչների թեկնածուների</p>	<p>էլեկտրոնային մոդուլը գործարկվել է</p>
--	--	--	--	--



			ընտրությունը, գույքի էլեկտրոնային վաճառքը, հրապարակել հաշվետվություններ, ամփոփել վիճակագրական տվյալներ	
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 500 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>3. Մշակել, ներդնել և գործարկել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը</b>	Ներկայումս առկա չէ էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ: Սակայն, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և մատչելի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային	Մշակվել, ներդրվել և գործարկվել է «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը	3.1. Վարչական դատավարության շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով 3.2. Դատավարական առնվազն 5	«Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկվել է

	<p>արդարադատության միասնական հարթակ (e-justice), որը իր մեջ կներառի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում էլեկտրոնային արդարադատության վարչական մոդուլի տեխնիկական առաջադրանքի մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ համագործակցություն է իրականացվում Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչների հետ</p>		<p>գործողություն (էլեկտրոնային հայցադիմումների, հակընդդեմ հայցերի, էլեկտրոնային պատասխանների, ապացույցների, միջնորդությունների ներկայացում) իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p>	
<p><b>Պատասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 500 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<p><b>2024 թվականի 2-րդ եռամսյակ</b></p>		

<p>4. Մշակել, ներդնել և գործարկել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը</p>	<p>Ներկայումս առկա չէ Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ: Սակայն, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և մատչելի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ (e-justice), որը իր մեջ կներառի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը: Ներկայումս Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվում է քրեական գործերով էլեկտրոնային մոդուլի տեխնիկական առաջադրանքը</p>	<p>Մշակվել և ներդրվել է «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը</p>	<p>4.1. Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով 4.2. Քրեական դատավարական առնվազն 3 գործողություն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p>	<p>«Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկվել է</p>
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 500 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

		2024 թվականի 3-րդ եռամսյակ		
<p>5. Համակցել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը դատավարության գործընթացում ներգրավված (տեղեկատվություն տրամադրող/ստացող) իրավասու մարմինների գործող էլեկտրոնային համակարգերի հետ</p>	<p>Քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացման նպատակով առկա է անհրաժեշտություն համակցելու «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը դատավարության ընթացքում տեղեկատվություն տրամադրող իրավասու մարմինների գործող էլեկտրոնային համակարգերի հետ</p>	<p>«Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը համակցվել է դատավարության գործընթացում ներգրավված (տեղեկատվություն տրամադրող/ստացող) իրավասու մարմինների գործող էլեկտրոնային համակարգերի հետ</p>	<p>5.1. Դատական, իրավապահ և իրավակիրառ մարմինների միջև փաստաթղթաշրջանառության առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով</p> <p>5.2. Դատավարության գործընթացում ներգրավված իրավասու մարմինների միջև պաշտոնական էլեկտրոնային նամակագրությունը, այդ թվում՝ դատավորների պաշտոնական էլեկտրոնային անձնական գրասենյակների առկայությունը, էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ իրավասու պետական մարմինների հետ</p>	<p>Էլեկտրոնային համակարգերի համակցումն ապահովված է</p>

			իրականացվում են էլեկտրոնային միասնական համակարգի միջոցով	
<b>Պատասխանարումարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Պետական եկամուտների կոմիտե</li> <li>• Ոստիկանություն</li> <li>• Ազգային անվտանգության ծառայություն</li> <li>• Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</li> <li>• Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 20 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>6.</b> Ներդնել հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգ	Ներկայումս դատական համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը և վիճակագրությունն ունեն սահմանափակ հասանելիություն: Վիճակագրական	Մշակվել և ներդրվել են հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի	6.1. Դատական վիճակագրական տեղեկատվությունը ստացվում է առցանց ռեժիմում 6.2. Ծրագրային ապահովման ներդնումից 1 տարի հետո հանրությանը հասանելի դատական	Դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am) գործում է դատական վիճակագրության արդիականացված բաժին (մասնագիտական հանրության

	<p>տվյալները հասանելի են www.court.am կայքում, սակայն կայքի տեղեկատվական բազան ժամանակին չի թարմացվում, իսկ վիճակագրական տեղեկատվությունը ինքնաշխատ չի գեներացվում և ամփոփված չէ օգտագործողի համար հարմար ձևաչափով: Մինչդեռ՝ դատական համակարգի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից հիմնաքարային նշանակություն ունի հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակումը</p>	<p>օրենսդրական հիմքերը և ծրագրային ապահովումը</p>	<p>վիճակագրական տվյալների թիվն ավելացել է շուրջ 30 տոկոսով</p>	<p>շրջանակում անցկացված հարցման (հարցումների) արդյունքներ)</p>
--	---	---	--	--

<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Արժեքը ներառված է էլեկտրոնային դատարան համակարգի յուրաքանչյուր մոդուլի ներդրման համար սահմանված արժեքի շրջանակներում</li> </ul>			
		<b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<p>7. Նախատեսել էլեկտրոնային գործիքներ հաշտարարության ոլորտի գործունեության ապահովման համար</p>	<p>Հաշտարարության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում, մասնավորապես, պարտադիր հաշտարարության ընթացակարգերի ներդրման, առցանց հաշտարարության կառուցակարգերի նախատեսման, Հայաստանում գործող հաշտարարների թվի ավելացման, նրանց նշանակման կամ ընտրության կառուցակարգերի վերանայման կապակցությամբ առկա է անհրաժեշտություն նախատեսելու էլեկտրոնային</p>	<p>Ներդրվել և գործարկվել են հաշտարարության ոլորտի գործունեության ապահովման համար նախատեսված էլեկտրոնային գործիքները</p>	<p>7.1. Հայաստանում գործող հաշտարարների 100 տոկոսը գրանցված են հաշտարարների էլեկտրոնային ռեեստրում 7.2. Արդարադատության նախարարությանը կողմի դիմում ներկայացնելու դեպքում կամ դատարանի կողմից պահանջագիր ներկայացնելու դեպքում հաշտարարի նշանակման կամ հաշտարարի թեկնածուի ընտրության և դատարանին ներկայացման դեպքերի 100 տոկոսը իրականացվում են էլեկտրոնային համակարգի միջոցով՝</p>	<p>Նոր հաշտարարները հաշվառվել են Արդարադատության նախարարության ռեեստրում, ինչպես նաև նրանց նշանակումը կամ ընտրությունը կատարվում են ինքնաշխատ համակարգի միջոցով՝ վիճակահանությամբ</p>

	<p>գործիքներ  հաշտարարության  ուլորտի  գործունեությունը և  նշված  բարեփոխումների  իրականացումն  ապահովելու համար:  Մասնավորապես.  - անհրաժեշտ է ստեղծել  հաշտարարների  միասնական  էլեկտրոնային ռեեստր,  որը հնարավորություն  կընձեռի  Արդարադատության  նախարարությանը  վարել և հրապարակել  գործող բոլոր  հաշտարարների  վերաբերյալ տվյալները,  նրանց կարգավիճակը,  մասնագիտացումը և այլ  անհրաժեշտ տվյալներ,  - ինչպես նաև  Արդարադատության  նախարարությանը  դիմելու կամ  դատարանի կողմից  պահանջագիր  ներկայացնելու  դեպքերում</p>		<p>հաշվի առնելով  հաշտարարների  մասնագիտացումը և  ծանրաբեռնվածությունը</p>	
--	--	--	--	--



	Էլեկտրոնային եղանակով իրականացնել հաշտարարների թեկնածուների ընտրությունը			
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 50 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>8.</b> Ներդնել և գործարկել «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակը	Ներկայումս առկա չէ Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ: Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և մատչելի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակ (e-justice): Էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի	Ներդրվել և գործարկվել է քաղաքացիական, վարչական, սնանկության և քրեական դատական գործերով մոդուլներից բաղկացած «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի մաս կազմող դատական միասնական Էլեկտրոնային համակարգը	«Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի մաս կազմող «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի Էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի շրջանակներում ապահովվել է դատավարության առնվազն 20 տոկոսի թվայնացումը	«Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի մաս կազմող «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի Էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը գործարկվել է

	(e-justice) ներդրման և գործարկման ճանապարհին կարևորագույն քայլ է հանդիսանում «Էլեկտրոնային դատարան» կառավարման միասնական համակարգի ստեղծումը, որը իր մեջ ներառելու է քաղաքացիական, վարչական, քրեական և սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլները			
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 100 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2025 թվականի 2-րդ եռամսյակ</b>		
<b>9. Ապահովել «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի</b>	Արդարադատության մարմիններում էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառո	Ապահովվել է «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի	9.1. «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի միջոցով	«Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի միջոցով արդարադատության

<p>միջոցով արդարադատության ոլորտի էլեկտրոնային համակարգերի հասանելիություն</p>	<p>ւթյան իրականացման, գործող համակարգերի վարման միասնական քաղաքականության մշակման, վիճակագրական համապարփակ տվյալների հավաքագրման, ռեսուրսների խնայողության և վարչարարության պարզեցման նպատակով անհրաժեշտ է էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի միջոցով ապահովել արդարադատության ոլորտի էլեկտրոնային համակարգերի հասանելիությունը</p>	<p>միջոցով արդարադատության ոլորտի էլեկտրոնային համակարգերի հասանելիությունը</p>	<p>ապահովվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը դատական, իրավապահ (հետաքննության և նախաքննության մարմիններ, դատախազություն) և իրավակիրառ (Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, Քրեակատարողական ծառայություն, Պրոբացիայի ծառայություն) մարմինների, ինչպես նաև այլ մարմինների և պաշտոնատար անձանց միջև (Ոստիկանության բնակչության պետական ռեգիստր, ինֆորմացիոն կենտրոն ծառայություն, նոտարներ, սնանկության գործերով կառավարիչներ և այլն) 9.2. Արդարադատության ոլորտում գործող մարմինների կողմից իրականացվող վարույթների</p>	<p>ոլորտի էլեկտրոնային համակարգերի հասանելիությունն ապահովված</p>
--	---	---	--	---

			<p>մասնակիցների համար գործում է հնարավորություն իրենց դիմումները, բողոքները, միջնորդությունները, ապացույցները, պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու անձնական էլեկտրոնային գրասենյակի միջոցով և նույն գրասենյակում ստանալու նաև իրենց մասնակցությամբ վարույթների նյութերը 9.3. Գործում է հնարավորություն անձնական գրասենյակների միջոցով իրականացնելու անհրաժեշտ վճարումները (պետական և տեղական տուրքեր, այլ վճարներ)</p>	
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			

	<ul style="list-style-type: none"> <li>• Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</li> <li>• «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 500 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-ին եռամսյակ</b>		
<b>10.</b> Արդիականացնել դատարաններում գործող դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը, ինչպես նաև կատարելագործել դատական ակտերի պաշտոնական հրապարակման համակարգը	Ներկայումս դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը հաշվի չի առնում դատավորների ծանրաբեռնվածությունը և գործերի բարդությունը: Ուստի, անհրաժեշտ է մշակել նշված բաղադրատարրերը բաշխման հիմքում դնող որակապես նոր համակարգ: Մինևույն ժամանակ, դատավարության հրապարակայնության պատշաճ ապահովման նպատակով անհրաժեշտ է կատարելագործել դատական ակտերի պաշտոնական	Դատարաններում կատարելագործվել են դատական ակտերի պաշտոնական հրապարակման էլեկտրոնային համակարգը և դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման համակարգը՝ հաշվի առնելով դատավորի ծանրաբեռնվածությունը և գործի բարդությունը	10.1. Դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգը կատարելագործված է, դատական գործերի առնվազն 50 տոկոսը բաշխվում և մակագրվում է կատարելագործված էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հաշվի առնելով դատավորի ծանրաբեռնվածությունը և գործի բարդությունը 10.2. Դատական ակտերի 100 տոկոսը հրապարակվում է կատարելագործված դատական ակտերի պաշտոնական հրապարակման համակարգում	Դատական գործերի էլեկտրոնային մակագրության, բաշխման նոր համակարգը և դատական ակտերի պաշտոնական հրապարակման կատարելագործված համակարգը գործում է

	հրապարակման համակարգը			
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն,</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 20 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

		2022 թվականի 4-րդ եռամսյակ		
<p>11. Արդիականացնել Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը, ստեղծել անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգ</p>	<p>Հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում վերջին տարիների ընթացքում օրական տեղադրվող հայտարարությունների թիվը կտրուկ աճել է և պահանջները բավարարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել կայքի տեխնիկական հնարավորությունները, ինչպես նաև ներդնել անհատական ծանուցումների համակարգ: Ներկայումս մշակվել է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից քաղաքացու, պետության և մասնավոր հատվածի համար համակարգից օգտվելու հեշտացված</p>	<p>Արդիականացվել է Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը: Ստեղծվել է անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգ</p>	<p>11.1. Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի տեխնիկական հնարավորությունները համապատասխանեցվել են արդի պահանջներին և անհրաժեշտ հրապարակային ծանուցումների 100 տոկոսը տեղադրվում է արդիականացված կայքէջում  11.2. Գործում է անհատական ծանուցումների համակարգը  11.3. Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը փոխգործում է էլեկտրոնային արդարադատության միասնական, փոստային և պաշտոնական փաստաթղթաշրջանառության Մալբրի</p>	<p>Գործում է անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգը</p>

	տարբերակ՝ ֆինանսական և վարչարարական առումներով: Այժմ իրականացվում է համակարգի փորձարկման և ներդրման գործընթացը		համակարգերի հետ	
Պատասխանատու մարմին	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</li> </ul>			
Ֆինանսավորման աղբյուր և չափ	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 300 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2022 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>12.</b> Ներդնել և գործարկել e-probation էլեկտրոնային կառավարման համակարգ	e-probation համակարգի ներդրման նպատակով 2021 թվականի նոյեմբերի 5-ին ԵԽ-ի կողմից արդեն հայտարարվել է մրցույթ: Մրցույթի ամփոփման արդյունքներով առկա է հաղթող ճանաչված մասնակից: Ներկայումս ընթանում են համապատասխան աշխատանքներ՝ ծրագրակազմի	Գործարկվել է e- probation էլեկտրոնային կառավարման համակարգը	E-probation-ի ներդրումը երաշխիքներ է ստեղծել ցանկացած ձևաչափով հաշվետվություններ ստանալու արդյունքում ճշգրիտ վերլուծական աշխատանքներ իրականացնել, ինչն էլ ապահովել է Պրոբացիայի ծառայության առավել արդյունավետ գործունեությունը, շահառուների	e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը ներդրվել և կիրառվում է Պրոբացիայի ծառայությունում



	մշակման ուղղությամբ		վերասոցիալականացմանն ուղղված համալիր և նպատակային միջոցառումների շարունակական իրականացումը, հանցանք կատարած անձանց հասարակություն վերաինտեգրելուն ուղղված քաղաքականության կատարելագործումը և կրկնահանցագործության նվազեցումը	
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 45.8 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2022 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>13.</b> Կատարելագործել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգը	Ներկայումս՝ - առկա է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործող էլեկտրոնային համակարգի կատարելագործման և	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգն արդիականացվել է	12.1. Կատարողական վարույթում թվային գործիքների կիրառման շրջանակն ընդլայնվել է առնվազն 30 տոկոսով 12.2. Կատարելագործվել և առնվազն 20 տոկոսով	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարելագործված էլեկտրոնային համակարգը գործարկվել է

	<p>տեխնիկական վերազինման անհրաժեշտություն - առկա է ինքնաշխատ եղանակով իրականացվող կատարողական գործողությունների շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն</p> <p>- կատարողական վարույթում ծանուցման էլեկտրոնային գործիքակազմերի կիրառությունը խիստ սահմանափակ է</p> <p>- առկա է Ծառայության և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործող համակարգերի արդիականացման և նոր կապուղիների ներդրման անհրաժեշտություն</p>		<p>ընդլայնվել է կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմի կիրառությունը</p> <p>12.3. էլեկտրոնային գործիքակազմի ընդլայնման արդյունքում առնվազն 30 տոկոսով ընդլայնվել է էլեկտրոնային եղանակով իրականացվող կատարողական գործողությունների շրջանակը</p> <p>12.4. Կատարողական գործողությունների առնվազն 30 տոկոսն իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ առանց մարդկային միջամտության</p> <p>12.5. Ծառայության և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործող</p>	
--	--	--	---	--

			համակարգերն արդիականացվել են և ներդրվել են առնվազն 3 նոր էլեկտրոնային առանձնացված կապուղիներ 12.6. Հարկադիր կատարման ենթակա ակտերի մակագրումը հարկադիր կատարողներին 100 տոկոսով իրականացվում է հինքնաշխատ եղանակով	
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 30 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>14.</b> Ներդնել և գործարկել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգ	Ներկայումս կատարողական գործողությունների արդյունավետության բարձրացման, կատարողական վարույթի տևողության կրճատման և կատարողական	Ներդրվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգը	14.1. Կատարելագործվել և առնվազն 30 տոկոսով ընդլայնվել է կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմի կիրառությունը	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգը գործարկվել է

	<p>վարույթի մասնակիցների իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ապահովելու նպատակով առկա է էլեկտրոնային ծանուցումների համակարգի կատարելագործման, էլեկտրոնային կատարողական վարույթի ներդրման, կատարողական գործողությունների առավելագույն շրջանակն էլեկտրոնային եղանակով իրականացնելու, ծանուցման էլեկտրոնային գործիքակազմի ընդլայման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործիքների կատարելագործման և կատարողական վարույթի մասնակիցներին</p>		<p>14.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային հարթակի և այլ գերատեսչությունների հետ անհրաժեշտ կապուղիների անխափան աշխատանքի արդյունքում փաստաթղթաշրջանառության համար պահանջվող ժամանակահատվածը կրճատվել է առնվազն 30 տոկոսով</p> <p>14.3. Վարույթի մասնակիցների անձնական տվյալների և ծառայության թվային շտեմարանի հնարավոր կորստի կամ արտահոսքի ռիսկերը առնվազն 50 տոկոսով նվազեցված են</p> <p>14.4. Կատարողական վարույթի շրջանակում ծախսվող ֆինանսական ռեսուրսները կրճատվել են առնվազն 10 տոկոսով</p>	
--	---	--	--	--

	<p>անձնական          էլեկտրոնային          գրասենյակի միջոցով          հնարավորինս լայն          գործողություններ          կատարելու          հնարավորություն          տալու          անհրաժեշտություն</p>		<p>14.5. Ապահովվել է          կատարողական          վարույթի կողմերի          համար կատարողական          վարույթին առնչվող          տեղեկատվության և          փաստաթղթերի          առնվազն 80 տոկոսի          թվային          հասանելիությունը</p> <p>14.6. Առնվազն 50          տոկոսով ընդլայնվել է          էլեկտրոնային          եղանակով          իրականացվող          կատարողական          գործողությունների          շրջանակը</p> <p>14.7. Կատարողական          վարույթի կողմերի          մասնակցությամբ          փաստաթղթաշրջանառո          ւթյունն առնվազն 30          տոկոսով, այդ թվում՝          ծանուցումները,          մեծապես          իրականացվում է          անձնական          էլեկտրոնային          գրասենյակի միջոցով,          ինչի արդյունքում նվազել          է կատարողական</p>	
--	--	--	---	--

			<p>վարույթի մասնակիցների և հարկադիր կատարողի անմիջական շփման անհրաժեշտությունը և զսպվել են դրանից բխող ռիսկերը</p> <p>14.8. Առնվազն 50 տոկոսով ընդլայնվել է անձնական էլեկտրոնային գրասենյակի օգտատերերի շրջանակը</p> <p>14.9. Էլեկտրոնային համակարգը համակցված է այլ պետական մարմինների (Պետական եկամուտների կոմիտեի, Կադաստրի կոմիտեի, Ոստիկանության, Սոցիալական ապահովության ծառայության, Կենտրոնական բանկի), Երևանի քաղաքապետարանի, առևտրային բանկերի, Կենտրոնական դեպոզիտարիայի և այլ կազմակերպությունների գործող էլեկտրոնային</p>	
--	--	--	--	--

			<p>համակարգերին,  փաստաթղթաշրջանառո  ւթյան համար  պահանջվող  ժամանակահատվածը  կրճատվել է առնվազն 30  տոկոսով  14.10. Հարկադիր  էլեկտրոնային  աճուրդների  էլեկտրոնային  համակարգի  արդիականացման և  Հարկադիր կատարումն  ապահովող  ծառայության նոր  էլեկտրոնային  համակարգի հետ  համակցման  արդյունքում գույքը  հարկադիր  էլեկտրոնային աճուրդով  իրացնելու վերաբերյալ  հայտարարության  հրապարակման  գործընթացի  տևողությունը կրճատվել  է առնվազն 50 տոկոսով  14.11. էլեկտրոնային նոր  գործիքների ներդրման և  նոր մոդուլների  համակցման</p>	
--	--	--	--	--

			արդյունքում առնվազն 80 տոկոսով բացառվել է նույն գործողությունը մի քանի անգամ կատարելու անհրաժեշտությունը	
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> </ul>			
<b>Ցիանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 150 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
15. Արդիականացնել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը	Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն մշակելու, ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների համապարփակ վերլուծությունն ապահովելու, ինչպես նաև հսկողության գործուն միջոցներ ներդնելու անհրաժեշտությամբ	Արդիականացվել է e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը	Քրեակատարողական հիմնարկների էլեկտրոնային կառավարման համակարգի առնվազն 40 տոկոսը արդիականացվել է	e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգն արդիականացվել է և համակցված ու անխափան կիրառվում է Քրեակատարողական ծառայությունում և քրեակատարողական հիմնարկներում



	<p>պայմանավորված՝ արդեն իսկ գործարկվել է «Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստրը»՝ «E-penitentiary» էլեկտրոնային կառավարման համակարգը, որը, սակայն, ունի արդիականացման կարիք՝ հաշվի առնելով, որ ծրագրային հենքը մշակվել է շուրջ 6 տարի առաջ և որոշակիորեն չի բավարարում ժամանակակից պահանջմունքներին</p>			
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>• «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 10 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<p><b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b></p>		

<p><b>16.</b> Ներդնել և գործարկել e-criminal case (քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգ) էլեկտրոնային կառավարման համակարգը</p>	<p>Ներկայումս առկա չէ քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կընձեռի վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով:  Համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքում կբարելավվի գործերի քննության արդյունավետությունը, կբարձրանա վարույթն իրականացնող մարմինների և դատախազության նկատմամբ վստահության մակարդակը, կնվազեցվեն գործի քննության ծախսերը, կոռուցպիոն ռիսկերը</p>	<p>Գործարկվել է e-criminal case էլեկտրոնային կառավարման համակարգը</p>	<p>16.1. Համակարգն ապահովում է քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում գեներացվող տեղեկատվության ինտեգրումը և արդյունավետ օգտագործումը պետական մարմինների կողմից  16.2. Նվազեցվել է քրեական գործերի քննության ընթացքում սխալների, թերությունների, բացթողումների հնարավորությունը  16.3. Քրեական գործերը քննվում են առավել արագ և արդյունավետ, ինչպես նաև նվազ ծախսատար եղանակով  16.4. Դյուրացվել է քրեական գործերի քննության ընթացքում ապացույցների ձեռքբերումը</p>	<p>e-criminal case էլեկտրոնային կառավարման համակարգը ներդրվել և կիրառվում է քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում</p>
---	---	---	---	---

<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> <li>• Պետական եկամուտների կոմիտե</li> <li>• Ոստիկանություն</li> <li>• Ազգային անվտանգության ծառայություն</li> <li>• Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</li> <li>• Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ</li> </ul>			
		<p><b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b></p>		
<p>17. Արդիականացնել Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգը</p>	<p>Ներկայումս Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգը հին է, քաղաքացիների կողմից ցածր է էլեկտրոնային գրանցման համակարգից օգտվելու պահանջարկը, քանի որ համակարգը օգտագործման համար բավականաչափ դյուրին և հասկանալի չէ, ինչը խնդրահարույց է վարչարարության</p>	<p>Արդիականացվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգը</p>	<p>Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության նոր էլեկտրոնային համակարգի ներդրումից հետո մեկ տարվա ընթացքում 20 տոկոսով բարձրացել է էլեկտրոնային համակարգի միջոցով իրավաբանական անձանց գրանցումը և անհատ ձեռնարկատերերի հաշվառումը</p>	<p>Գործարկվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության արդիականացված էլեկտրոնային համակարգը (Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի e-register.am կայք)</p>

	<p>Ժամկետների կրճատման, գործարար միջավայրի և մատուցվող ծառայությունների որակի պարբերական բարձրացման անհրաժեշտության տեսանկյունից</p>			
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 200 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2025 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>18.</b> Թվայնացնել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերը, ստեղծել թվային արխիվ	Ներկայումս Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության արխիվային նյութերի մեծ մասը թվայնացված չեն, ինչը դժվարացնում է դրանց հետ աշխատանքը, ինչպես նաև խնդրահարույց է	Ստեղծվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության թվային արխիվը	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացման աշխատանքների ավարտից հետո գործում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի թվային արխիվը, փաստաթղթերի 60	Գործում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության թվային արխիվը (հասանելի է e-register.am կայքում)

	«Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի հետ փոխգործելիության ապահովման տեսանկյունից		տոկոսը թվայնացված է	
<b>Պատասխանարումարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> </ul>			
<b>Ցինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 250 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2026 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>19.</b> Մշակել, ներդնել և գործարկել Ազգային արխիվի էլեկտրոնային միասնական կառավարման համակարգը	Ներկայումս Հայաստանի ազգային արխիվում կիրառվող ծրագիրը ավտոմատացված տեղեկատուորոնողական համակարգ է, որը նախատեսված է տվյալների բազայում	Մշակվել և ներդրվել է Ազգային արխիվի էլեկտրոնային միասնական կառավարման համակարգը	19.1. Գործարկվել է Ազգային արխիվի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը 19.2. Ազգային արխիվի էլեկտրոնային միասնական կառավարման	Ազգային արխիվի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը գործարկվել է: Համակարգից օգտվելու կարգը հրապարակված է Արդարադատության նախարարության և Ազգային արխիվի

	<p>տեղեկությունների մուտքագրման, պահպանության և փնտրման համար, էլեկտրոնային շտեմարանը իրենից ներկայացնում է արխիվային գործում առկա յուրաքանչյուր փաստաթղթի բովանդակության համառոտ ներկայացումը քարտի տեսքով և դրա մուտքը Հայաստանի ազգային արխիվ ծրագիր, սակայն այն կցված չէ մեկ միասնական կառավարման համակարգին,</p> <p>- Գործող էլեկտրոնային համակարգի ծրագրային մոդուլները ստեղծման օրվանից չեն թարմացվել,</p> <p>- Ազգային արխիվ դիմումների մեծ մասը դիմումատուների կողմից ներկայացվում է առձեռն</p>		<p>համակարգի ներդրումից հետո երկու տարվա ընթացքում մատուցվող ծառայությունների առնվազն 20 տոկոսի վերաբերյալ հարցումները իրականացվում են e-request հարթակի միջոցով, իսկ պատասխանները տրամադրվում են էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի կամ դիմումատուի էլեկտրոնային փոստի միջոցով</p> <p>19.3. Ազգային արխիվի էլեկտրոնային միասնական կառավարման համակարգի ներդրումից հետո երկու տարվա ընթացքում քաղաքացի-արխիվ ուղղակի շփումը նվազել է 20 տոկոսով</p>	<p>պաշտոնական կայքէջերում</p>
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> </ul>			

<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 500 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<p><b>20.</b> Մշակել և ներդնել նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգը</p>	<p>Ներկայումս ապրանքի ապահով վաճառքի պայմանագրերը կապակցությամբ նոտարները չեն կարողանում էլեկտրոնային եղանակով տրամադրել կատարողական մակագրության թերթ, քանի որ համապատասխան էլեկտրոնային պայմանագրերը նրանց կողմից վավերացված չեն լինում: Արդյունքում, այդ գործարքների համար ֆինանսական կառույցները կատարողական թերթ ստանում են դատական կարգով, ինչը նաև լրացուցիչ ծանրաբեռնվածություն է դատարանների համար</p>	<p>Ներդրվել է նոտարների կողմից էլեկտրոնային եղանակով ապրանքի ապահով վաճառքի պայմանագրերի վավերացման և դրանց համար կատարողական մակագրության թերթի տրամադրման էլեկտրոնային համակարգը</p>	<p>Նախատեսվել է ապրանքի ապահով վաճառքի պայմանագրերի՝ նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ վավերացնելու հնարավորություն նախատեսող համակարգ՝ ապահովելով դրանցից ծագող պարտավորությունների հարկադիր կատարման դեպքում կատարողական մակագրության թերթերի էլեկտրոնային եղանակով տրամադրումը</p>	<p>Նոտարների կողմից էլեկտրոնային եղանակով ապրանքի ապահով վաճառքի պայմանագրերի վավերացման և դրանց համար կատարողական մակագրության թերթի տրամադրման էլեկտրոնային համակարգը գործարկվել է</p>
<b>Պարասխանադրում</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> </ul>			

	<ul style="list-style-type: none"> <li>• Նոտարական պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 30 միլիոն դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<p><b>21.</b> Ներդնել և գործարկել նոտարի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով միակողմանի որոշ գործարքներ վավերացնելու և փաստաթղթերի փոխանակման (փոխանցման) պայմաններ</p>	<p>Ներկայումս նոտարական գործողությունների իրականացման համար, այդ թվում միակողմանի գործերքների վավերացման համար, անհրաժեշտ է նոտարի և գործարքի կողմի (կողմերի) ֆիզիկական ներկայությունը մեկ վայրում, ինչը հնարավորություն չի տալիս ապահովելու նոտարական ծառայությունների մատուցման ճկունությունը և խնդրահարույց է այն անձանց իրավունքների պատշաճ իրացման տեսանկյունից, ովքեր հնարավորություն չունեն անձամբ ներկայանալու</p>	<p>Ներդրվել է նոտարի կողմից որոշ միակողմանի գործարքների՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով վավերացման փաստաթղթերի փոխանակման համակարգը</p>	<p>21.1. Նոտարները միակողմանի գործարքների առնվազն երեք տեսակ կարող են վավերացնել էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով</p> <p>21.2. Էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով միակողմանի գործարքների վավերացման կարգի ներդրումից հետո երկու տարվա ընթացքում միակողմանի գործարքների 20 տոկոսը վավերացվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով</p>	<p>Նոտարի կողմից որոշ միակողմանի գործարքների՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով վավերացնելու համակարգը և փաստաթղթերի փոխանակման համակարգը գործարկվել է</p>



	նոտարական գրասենյակ			
<b>Պատասխանարումարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձր տեխնոլոգիաների նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ(համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 20 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՈՒՄ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՄԲ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Փաստահավաք գործունեության իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդրում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքները զանգվածային խախտումների դեպքերը և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունները հնարավորինս բացահայտված են</p>	<p>1. Հայաստանում ստեղծվել և գործում է փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույց</p>	<p>1.1. Հայաստանում առավելագույնը 3 տարի ժամկետով գործել է փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույց                      1.2. Փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցին վերապահված ոլորտներում և ժամանակաշրջանի համար իրավունքների խախտումների դեպքերի առնվազն 50 տոկոսը բացահայտված են                      1.3. Իրավունքների խախտումների բացահայտված դեպքերի առնվազն 30 տոկոսի համար առաջարկվել են խախտված իրավունքների վերականգնման միջոցներ</p>

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2023 թվականի 1-ին կիսամյակ		
<p>1. Մշակել փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցի ձևավորման վերաբերյալ</p>	<p>Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել անձանց իրավունքների զանգվածային</p>	<p>Մշակվել է փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցի ձևավորման կարգը (օրինակ՝ արդեն իսկ</p>	<p>Օրենսդրությամբ առկա է հնարավորություն նախատեսելու փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույց,</p>	<p>Համապատասխան կարգավորումներ նախատեսող օրենսդրական փաթեթը ներկայացվել է</p>

<p>օրենսդրական նախագծերի փաթեթ</p>	<p>խախտումների տարբեր դրսևորումներ: Մասնավորապես, անհրաժեշտ է ուսումնասիրել և բացահայտել համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման և անցկացման, հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումների, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումների, անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումների, ոչ մարտական պայմաններում զինձառայողների մահվան դեպքերի, ինչպես նաև անհրաժեշտության</p>	<p>գործող մարմնի շրջանակներում առանձին ստորաբաժանման ձևով), նպատակները, իրավասությունները, գործունեության կարգը և անհրաժեշտ այլ հարաբերությունները կարգավորող օրենսդրական նախագծերի փաթեթ</p>	<p>որը փաստահավաք գործունեություն կիրականացնի առնվազն 3 ոլորտներում</p>	<p>Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
------------------------------------	--	---	---	---

	<p>դեպքում վերոնշյալ դեպքերի և իրադարձությունների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ ոլորտներում մարդկանց իրավունքներ զանգվածային խախտումների դեպքերը: Սակայն մինչ օրս Հայաստանում չի գործել հատուկ նման իրավասություններով օժտված փաստահավաք գործառույթներ իրականացնող մարմին</p>			
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>2. Ձևավորել փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույց</b>	<p>Համապատասխան օրենսդրական փաթեթի ընդունման արդյունքում անհրաժեշտություն է առաջանալու փաստացի ձևավորել</p>	<p>Փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցն իր իրավասությունների շրջանակում գործունեություն է</p>	<p>2.1. Փաստահավաք գործառույթների իրականացնող կառույցի ձևավորումից հետո առավելագույնը 3 տարվա ընթացքում</p>	<p>Փաստահավաք գործունեություն իրականացնող կառույցը հրապարակել է միջանկյալ և եզրափակիչ զեկույցներ</p>

	<p>փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցը և ապահովել դրա բնականոն գործունեությունը</p>	<p>իրականացնում համապատասխան ոլորտներում մարդու իրավունքների խախտման դեպքերի բացահայտման և ուսումնասիրման ուղղությամբ</p>	<p>դրան վերապահված ոլորտներում և ժամանակաշրջանի համար իրավունքների խախտումների դեպքերի առնվազն 50 տոկոսը բացահայտված են</p> <p>2.2. Իրավունքների խախտումների բացահայտված դեպքերի առնվազն 30 տոկոսի համար առաջարկվել են խախտված իրավունքների վերականգնման միջոցներ</p> <p>2.3. Փաստահավաք գործառույթների իրականացնող կառույցի ձևավորումից հետո՝ առավելագույնը 3 տարվա ընթացքում վերջինիս միջանկյալ և եզրափակիչ զեկույցները ներկայացվել են համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների քննարկմանը</p>	
--	---	---	---	--

<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)</li> </ul>
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Տարեկան 85 մլն ՀՀ դրամ (առավելագույնը 3 տարի)</li> </ul>

**ՆՊԱՏԱԿ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Սահմանադրական բարեփոխումների իրականացում
- Կայացած ընտրությունների ընթացքում ծագած և վերհանված խնդիրների վերհանման միջոցով ընտրական օրենսդրության բարեփոխում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտները առավելապես զարգացած են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Սահմանադրաիրավական կառուցակարգերը վերանայված են և դրական ազդեցություն են ունեցել անձանց իրավունքների պաշտպանության, պետական իշխանության կազմակերպման և գործունեության վրա</li> <li>- Ընտրական օրենսդրությունը վերանայվել է, և ամրապնդվել են անձանց ընտրական իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքները</li> </ul>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ձևավորվել են բարեփոխումների իրականացումն ապահովող մարմինները</li> <li>2. Մշակվել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը</li> <li>3. Մշակվել է Սահմանադրական բարեփոխումների նախագիծը</li> <li>4. Ընտրական օրենսդրությունը բարելավվել է</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1.1. Գործում է Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, որը համակարգում է իրականացվող գործընթացները</li> <li>1.2. Գործում է Սահմանադրական բարեփոխումների առնվազն 5 անդամից կազմված մասնագիտական հանձնաժողովը</li> <li>1.3. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից կազմակերպված հարցումներին մասնակցել է առնվազն 500 անձ</li> <li>2.1. Հայեցակարգը արտացոլում է հանձնաժողովի ուսումնասիրությունների և հանրային քննարկումների արդյունքում վերհանված կարիքների առնվազն 70 տոկոսը</li> <li>2.2. Առնվազն 3 քննարկում անցած Սահմանադրական բարեփոխումների իրականացման հայեցակարգի նախագիծը առկա է</li> <li>3.1. Սահմանադրական բարեփոխումների նախագիծը</li> </ol>

		<p>արտացոլում է հայեցակարգից բխող ուղղությունների առնվազն 50 տոկոսը</p> <p>4.1. Ընտրողների ցուցակների ճշգրտման և արդյունավետ վարման, ընտրողների նույնականացման և տեղեկատվական շտեմարանների փոխգործելիության առնչությամբ առկա և բացահայտված խնդիրների շուրջ 50 տոկոսը վերհանված և գույքագրված են</p> <p>4.2. Ընտրական ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ոլորտում վերհանված խնդիրների առնվազն 70 տոկոսը ստացել են օրենսդրական լուծում</p>
--	--	---

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2023 թվականի 2-րդ եռամսյակ		
1. Ապահովել Սահմանադրական բարեփոխումների խորհուրդի և մասնագիտական հանձնաժողովի գործունեությունը	Ներկայումս Կառավարության 18.08.2021 թ.-ի N 1363-Ա որոշման հավելվածի 5.1-ին կետով, ինչպես նաև Կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի՝ Արդարադատության նախարարությանը վերապահված ոլորտների 2.1-ին կետով	Ձևավորված մարմինները գործում են սահմանված աշխատակարգին համապատասխան	1.1. Վարչապետի համապատասխան որոշման ընդունումից հետո առնվազն 1.5 տարի նույն որոշմամբ հաստատված աշխատակարգի հիման վրա գործում է Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը 1.2. Սահմանադրական	Սահմանադրական բարեփոխումների խորհուրդի և հանձնաժողովի գործունեությունը, ինչպես նաև գործունեության արդյունքները պարբերաբար հրապարակվում են ՋԼՄ-ներով և Արդարադատության



	<p>նախատեսվում է Սահմանադրական բարեփոխումների իրականացում: Պայմանավորված վերոնշյալով և Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական մակարդակով իրականացնելու նպատակով՝ ձևավորվել են Սահմանադրական բարեփոխումների խորհրդը և մասնագիտական հանձնաժողովը, որպիսի համատեքստում անհրաժեշտ է ապահովել դրանց պատշաճ գործունեությունը: Մինևույն ժամանակ, հանրության լայն շրջանակների մասնակցության ապահովման, նրանց առաջարկությունների և կարծիքների հավաքագրման նպատակով առկա է քննարկումների</p>		<p>բարեփոխումների խորհրդի կողմից ձևավորվելուց և Վարչապետի որոշմամբ հաստատվելուց հետո առնվազն 1.5 տարի գործում է Սահմանադրական բարեփոխումների առնվազն 5 անդամից բաղկացած մասնագիտական հանձնաժողովը</p> <p>1.3. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից իրականացվել է առնվազն 3 քննարկում հանրության տարբեր խմբերի և կառույցների մասնակցությամբ</p> <p>1.4. Առնվազն 500 անձ մասնակցել է Սահմանադրական բարեփոխումների իրականացման համար հանձնաժողովի կողմից կազմակերպված հարցումներին</p> <p>1.5. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից</p>	<p>նախարարության պաշտոնական կայքում</p>
--	---	--	--	---

	կազմակերպման անհրաժեշտություն		Սահմանադրության փոփոխությունների նախագիծը մշակվելուց հետո իրականացվել է առնվազն 2 հանրային քննարկում՝ պատրաստի նախագիծը քննարկելու նպատակով	
<b>Պարասխանարումար մին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Տարեկան շուրջ 55 մլն ՀՀ դրամ (շուրջ մեկուկես տարվա կտրվածքով, ընդամենը՝ շուրջ 82.5 մլն ՀՀ դրամ)՝ որպես Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների վարձատրություն և քարտուղարության ապահովման ծախսեր</li> <li>Տարեկան շուրջ 12 մլն ՀՀ դրամ՝ որպես քննարկումների կազմակերպման ծախսեր</li> </ul>			
		<b>2022 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>2.</b> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի մշակում	Կառավարության 18.11. 2021թ.-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի՝ Արդարադատության նախարարությանը վերապահված ոլորտների 2.1-ին կետով նախատեսված բարեփոխումները իրականացնելու, ինչպես նաև	Քննարկումների ամփոփման արդյունքում մշակվել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը	Առկա է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը, որով անդրադարձ են ուսումնասիրված խնդիրների առնվազն 50 տոկոսին	Հայեցակարգի նախագիծը հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում

	<p>Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները ամփոփելու նպատակով առկա է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ մշակելու անհրաժեշտություն</p>			
<b>Պատասխանատու մին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Ֆինանսավորումը նախատեսված է սույն նպատակի 1-ին գործողության ներքո</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ եռամսյակ</b>		
<b>3.</b> Սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակում	<p>Ներկայումս՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության կիրառման շուրջ 6 տարիների ընթացքում ի հայտ են եկել Սահմանադրափրավական կարգավորումների շրջանակում առկա</p>	<p>Հայեցակարգի հիման վրա մշակվել է Սահմանադրական բարեփոխումների նախագիծը</p>	<p>Սահմանադրական բարեփոխումների նախագիծը արտացոլում է հայեցակարգից բխող ուղղությունների առնվազն 50 տոկոսը</p>	<p>Սահմանադրական բարեփոխումների նախագիծը հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում</p>

	<p>տարբեր խնդիրներ և բացեր, որոնց նախատեսվում է անդրադառնալ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի շրջանակներում: Իր հերթին, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հիման վրա առաջանալու է անհրաժեշտություն մշակելու Սահմանադրական փոփոխությունների նախագիծ, որով լուծումներ կառաջարկվեն բացահայտված խնդիրներին և բացերին</p>			
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			

<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Ֆինանսավորումը նախատեսված է սույն նպատակի 1-ին գործողության ներքո</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<p><b>4.</b> 2018-2021թթ. կատարված օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումներով, ինչպես նաև 2021 թվականին կայացած Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով գույքագրված խնդիրների հիման վրա մշակել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ</p>	<p>Ներկայումս 2021թ.-ին Հայաստանում կայացած ընտրությունների արդյունքներով ի հայտ են եկել ընտրական օրենսդրության որոշ խնդիրներ, հատկապես, ընտրությունների կազմակերպման և անցկացման թվային գործիքների ընդլայնման, ընտրությունների ժամանակ անձի համընդհանուր (ոչ միայն տեղամասային մակարդակով) նույնականացման միասնական եղանակի ներդրման, այդ թվում՝ տեղեկատվական շտեմարանների փոխգործելիությանն ուղղված նոր գործիքակազմերի ներդրման առնչությամբ: Իր հերթին,</p>	<p>Մշակվել է ընտրական օրենսդրության փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթ</p>	<p>5.1. Միջազգային կառույցների հայտնած դիրքորոշումներով, ինչպես նաև 2021 թվականին Հայաստանում կայացած Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ի հայտ եկած օրենսդրական խնդիրների շուրջ 50 տոկոսը վերհանվել և գույքագրվել են 5.2. Ընտրական ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ոլորտում վերհանված խնդիրների առնվազն 70 տոկոսը ստացել են օրենսդրական լուծում</p>	<p>Ընտրական օրենսդրության փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի կամ փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

<p>նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթ</p>	<p>նախընտրական քարոզչության առնչությամբ առկա է անհրաժեշտություն օրենսդրական մակարդակում ճիշտ հավասարակշռել նախընտրական քարոզարշավի ընթացքը, ապահովել հանրային հարթակների և ռեսուրսների հավասար հասանելիությունը: Ուստի, նման խնդիրները անհրաժեշտ է վերհանել և գույքագրել և դրա արդյունքների հիման վրա մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ</p>			
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)</li> <li>• Ոստիկանություն</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 4. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Դատարանների մասնագիտացման կամ դատավորների ենթամասնագիտացման, կարողությունների, ինչպես նաև բարեվարքության կառուցակարգերի զարգացման շարունակական ապահովում
- Դատավորների վարձատրության շարունակական բարձրացում՝ սկսած բարձր ատյաններից
- Հակակոռուպցիոն դատարանի շենքային և նյութատեխնիկական հագեցվածության ապահովում
- Դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի բարելավում
- Դատավորների բարեվարքության ամրապնդում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Բարձրացել է արդարադատության արդյունավետությունը, դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը</p>	<p>1. Բարելավվել են դատական համակարգի գործունեությունը և դատավորի մասնագիտության կարգավիճակը                  2. Դատարաններն ապահովված են բնականոն գործունեության համար անհրաժեշտ նյութական և տեխնիկական ռեսուրսներով և կարողություններով</p>	<p>1.1. Դատավորների ենթամասնագիտացումների կամ մասնագիտացված դատարանների թիվն ավելացել է առնվազն մեկով                  1.2. Երևան քաղաքում գործում են առաջին ատյանի քրեական և քաղաքացիական դատարաններ                  1.3. Դատավորների թեկնածուները ընտրվում են դատավորների հավակնորդների թեկնածուների որակավորման ստուգման գրավոր փուլի և բանավոր հարցազրույցի արդյունքների համատեղ հաշվառման հիման վրա                  1.4. Հակակոռուպցիոն գործեր քննող դատավորների առնվազն 30 տոկոսը վերապատրաստվել է                  1.5. Դատավորների բարեվարքության պարբերական ստուգման կառուցակարգերը գործում են</p>

		<p>1.6. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ծայների կշիռը բարձրացել է առնվազն 1 ձայնով</p> <p>2.1. Բարձր ատյաններում դատավորների վարձատրությունը վերանայվել է առնվազն 50 տոկոսով</p> <p>2.2. Հակակոռուպցիոն դատարանների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) շենքային և նյութական պայմաններով ապահովելու ուղղությամբ գործընթացները սկսվելուց հետո երեք տարվա ընթացքում հակակոռուպցիոն դատարանների կարիքների առնվազն 70 տոկոսը բավարարվել է</p>
--	--	---

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2025 թվականի 2-րդ կիսամյակ		
1. Ձևավորել մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների, այդ թվում՝ փոքր հայցապահանջներ քննող, ինչպես նաև առանձին տեսակի վարչական գործեր	Ներկայումս իրավական համակարգի զարգացումները տեղի են ունենում առավելապես ենթամակարդակներում, երբ իրավունքի միևնույն ոլորտում առաջանում են դրա ճյուղավորումներ	Մշակվել է մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների ստեղծման ուղղությունները կանխորոշող հայեցակարգ	Մասնագիտացված դատարանների կամ դատավորների ենթամասնագիտացումների ստեղծման ուղղությունները կանխորոշող հայեցակարգը արտացոլում է շահագրգիռ անձանց	Մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների ստեղծման ուղղությունները կանխորոշող հայեցակարգը առկա է Արդարադատության նախարարությունում



<p>քննող դատավորների, զինվորական տրիբունալի և մասնագիտացված այլ դատարանների ստեղծման հայեցակարգ</p>	<p>տարբեր ենթաոլորտներով, որոնց համապատասխան ճյուղավորվում են նաև իրավաբանների, այդ թվում վեճերը լուծող դատավորների մասնագիտացումները: Ուստի, առավել նպատակահարմար է թվում ինչպես առանձին մասնագիտացված դատարանների ստեղծումը, այնպես էլ ընդհանուր իրավասության կամ որևէ մասնագիտացված դատարանում առանձին ենթամասնագիտության բ դատավորների նախատեսումը կամ ընդհանուր իրավասության դատարանների այնպիսի վերաիմաստավորումը, որի դեպքում դրանք կկարողանան առանձին քննել նման ենթաոլորտների</p>		<p>հետ քննարկումների (առնվազն 3) ժամանակ բարձրաձայնված կարիքների շուրջ 50 տոկոսը</p>	
---	--	--	--	--

	շրջանակներում ծագող վեճերը			
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 12 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<p>2. Ուսումնասիրել Երևան քաղաքում առաջին ատյանի քրեական և քաղաքացիական դատարաններ ձևավորելու իրավական հնարավորությունը և ըստ անհրաժեշտության մշակել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծեր</p>	<p>Ներկայումս Երևան քաղաքում գործում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ գործում են թվով 72 դատավորներ՝ 33-ը քրեական, իսկ 39-ը քաղաքացիական մասնագիտացմամբ: Նշվածի հետևանքով, դատարանի աշխատանքը համակարգվում և ղեկավարվում է մեկ անձի՝ դատարանի նախագահի կողմից: Նման պարագայում օբյեկտիվորեն բարդություններ են</p>	<p>Մշակվել են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծեր</p>	<p>Երևան քաղաքում գործում են առաջին ատյանի քրեական և քաղաքացիական դատարաններ</p>	<p>«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

	<p>առաջանում դատարանի բնականոն գործունեությունը ապահովելու, դատարանի աշխատակազմի գործունեությունը վերահսկելու և նման այլ հարցերում: Բացի այդ, առկա է անհրաժեշտություն բարելավելու դատարան մուտք լինող գործերի՝ դատավորների միջև օպերատիվ բաշխման ընթացքը՝ հաշվի առնելով, որ ներկայումս Երևան քաղաքի դատարանը ունի 6 նստավայր:</p>			
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե</li> <li>Տարեկան շուրջ 28 մլն ՀՀ դրամ (դատարանների ստեղծման դեպքում նոր նախագահի, դատարանի աշխատակազմի ղեկավարի, գրասենյակի պետի և գլխավոր հաշվապահի վարձատրություն)</li> </ul>			
		<b>2026 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>3. Հայեցակարգի հիման վրա մշակել</b>	Առաջարկված հայեցակարգային	Մշակվել են «Դատական	Դատավորների ենթամասնագիտացումն	«Դատական օրենսգիրք» սահմանադրական

<p>«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծեր՝ իրավական հիմքեր ստեղծելով նոր մասնագիտացված դատարանների կամ դատավորների ենթամասնագիտացումների նախատեսման վերաբերյալ</p>	<p>ուղղությունների հիման վրա կարող է անհրաժեշտություն առաջանալ փոփոխություններ կատարել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում՝ նախատեսելու համար նոր մասնագիտացված դատարաններ կամ դատավորների ենթամասնագիտացումներ</p>	<p>օրենսգիրք» սահմանադրական օրենքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում նախատեսող իրավական ակտերի նախագծեր</p>	<p>երի կամ մասնագիտացված դատարանների թիվն ավելացել է առնվազն 1-ով</p>	<p>օրենքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե</li> <li>• Տարեկան շուրջ 200 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<p><b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b></p>		
<p><b>4.</b> Մշակել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված բարձր ատյաններում դատավորների</p>	<p>2021 թվականին տարբեր դատական ատյաններում (հակակոռուպցիոն առաջին ատյան, վերաքննիչ</p>	<p>Մշակվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության</p>	<p>Բարձր ատյաններում դատավորների վարձատրությունը վերանայվել է առնվազն 50 տոկոսով</p>	<p>«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»</p>

<p>աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացմանը</p>	<p>քաղաքացիական և քրեական դատարաններ) դատավորների վարձատրության բարձրացումը (50 և ավելի տոկոս) տրամաբանորեն հանգեցնում է նաև ավելի բարձր ատյաններում (Վճռաբեկ, Սահմանադրական դատարաններ) դատավորների վարձատրության չափերի վերանայման անհրաժեշտությանը</p>	<p>մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ</p>		<p>օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Ֆինանսների նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե</li> <li>• Տարեկան շուրջ 283 մլն ՀՀ դրամ, որից 86 մլն ՀՀ դրամ Սահմանադրական դատարանի մասով, իսկ 197 մլն ՀՀ դրամը՝ Վճռաբեկ դատարանի</li> </ul>			
		<p><b>2024 թվականի 2-րդ կիսամյակ</b></p>		
<p><b>5.</b> Ապահովել հակակոռուպցիոն դատարանների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված</p>	<p>Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման գործընթացը սկսվել է 2021 թվականին՝ համապատասխան</p>	<p>Սկսվել և շարունակվում է հակակոռուպցիոն դատարանի (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները</p>	<p>4.1. Դատարաններին շենքային և նյութական պայմաններով ապահովելու ուղղությամբ</p>	<p>Հակակոռուպցիոն դատարանի (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի)</p>

<p>բողոքները քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական միջոցները</p>	<p>օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Ներկայումս ընթանում է դատավորների թեկնածուների ընտրության գործընթացը, սակայն դատարանի ձևավորման և գործունեությունը սկսելու համար առկա չեն շենքային պայմաններ և նյութատեխնիկական հագեցվածություն: Մասնավորապես, առկա է անհրաժեշտություն քաղաք Երևանում կառուցել հսակակոռուպցիոն դատարանի և հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիր, ինչպես նաև, Արա Սարգսյան 5/1, Գարեգին Նժդեհի 23/1, Թբիլիսյան խճուղի 3/9 և Բաշինջաղյան 100 հասցեներում իրականացնել շինարական և վերանորոգողական աշխատանքներ՝</p>	<p>քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը</p>	<p>գործընթացները սկսվելուց հետո երեք տարվա ընթացքում հակակոռուպցիոն դատարանի կարիքների առնվազն 70 տոկոսը բավարարվել է 4.2. Հակակոռուպցիոն դատարանի (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) շենքային պայմանների բարելավման շինարարական գործընթացների մեկնարկից հետո 1,5 տարվա ընթացքում գործում են Արա Սարգսյան 5/1 և Գարեգին Նժդեհի 23/1 հասցեներում տեղակայված դատարանները, ինչպես նաև Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական վերաքննիչ դատարանը վերանորոգված է, իսկ դատական արխիվը տեղակայվել է</p>	<p>արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ փաստաթղթերը և արդեն տրամադրված աջակցության վերաբերյալ փաստաթղթերը առկա են Արդարադատության նախարարությունում</p>
--	--	---	--	---

	ապահովելու համար Հակակոռուպցիոն դատարանի դատավորների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) անհրաժեշտ շենքային պայմանները		Բաշինջաղյան 100 հասցեում 4.3. Հակակոռուպցիոն. դատարանի շենքային պայմանների բարելավման գործընթացի մեկնարկից 4 տարի հետո գործում է հակակոռուպցիոն դատարանի և հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիրը	
<b>Պատասխանաբար մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Ֆինանսների նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Քաղաքաշինության կոմիտե</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 7.9 մլրդ ՀՀ դրամ (Հակակոռուպցիոն դատարանի և հակակոռուպցիոն կոմիտեի նոր շենքային համալիր՝ 7.08 մլրդ ՀՀ դրամ, Արա Սարգսյան 5/1 հասցեում՝ 504.5 մլն ՀՀ դրամ, Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում՝ 47.9 մլն ՀՀ դրամ, Բաշինջաղյան 100 հասցեում՝ 81.9 մլն ՀՀ դրամ, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում՝ 157.3 մլն ՀՀ դրամ)</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>6.</b> Վերանակել դատավորների նշանակման օրենսդրական կարգը՝.	Չնայած 2020թ. մարտի 25-ին Դատական օրենսգրքում կատարված	Մշակվել է «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն	5.1. Դատավորների թեկնածուները ընտրվում են դատավորների հավակնորդների	«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և, ըստ անհրաժեշտության,

<p>բարձրացնելով դատավորների հավակնորդների թեկնածուների որակավորման գրավոր քննության և բանավոր հարցազրույցի արդյունքների արձանագրման օբյեկտիվությունը և նախատեսելով դատավորների ներգրավման նոր ընթացակարգեր</p>	<p>փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ դատավորների հավակնորդների թեկնածուների որակավորման ստուգման գրավոր փուլի արդյունքները հաշվի են առնվում հարցազրույցի ընթացքում, սակայն առկա չեն այդ երկու փուլերի գնահատման միասնական կառուցակարգեր, որպեսզի գրավոր փուլի արդյունքները իրական ազդեցություն ունենան հարցազրույցի փուլի վրա: Ըստ այդմ, դատավորի թեկնածուն չի ստանում որակավորման ստուգման համար ընդհանուր գնահատական, ինչով պայմանավորված անհրաժեշտ է</p>	<p>նախատեսող իրավական ակտի նախագիծը</p>	<p>թեկնածուների որակավորման ստուգման գրավոր փուլի և բանավոր հարցազրույցի արդյունքների համատեղ հաշվառման հիման վրա 5.2. Գործում են դատավորների ներգրավման առնվազն 2 տարբերակված ընթացակարգեր 5.3. Նոր ընթացակարգերի ներդնումից 2 տարի հետո առնվազն 10 անձ դատավոր է դարձել նոր ընթացակարգերի միջոցով</p>	<p>հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	--	---	---	--



	<p>նախատեսել համապատասխան իրավական հիմքեր: Միննույն ժամանակ, ներկայումս չեն գործում դատավորների ներգրավման տարբերակված և ճկուն ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտաին ապահովել դատական համակարգի գրավչությունը և առավել մեծ թվով պրոֆեսիոնալ անձանցով համալրումը</p>			
<b>Պատասխանաբար մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
7. Իրականացնել հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումներ	Ներկայումս Կառավարությունը ձեռնամուխ է եղել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի՝ որպես	Դատավորների ուսուցման, վերապատրաստման համար նախատեսված ծրագրերը վերանայվել են	Ծրագրերի հաստատմանը հաջորդող 1 տարվա ընթացքում հակակոռուպցիոն դատարանի	Հակակոռուպցիոն դատարանների դատավորների վերապատրաստման ծրագրերը և մոդուլները, ինչպես նաև

	<p>առանձնահատկություններ ունեցող, այդ թվում՝ հատուկ մասնագիտացում պահանջող ոլորտի ձևավորմանը: Այս համատեքստում, հակակոռուպցիոն դատարանների համակարգի կայացման և արդյունավետ գործունեության համար կարևորվում է նաև կարողությունների կատարելագործումը՝ հատուկ մասնագիտացում պահանջող հարցերով գիտելիքների, հմտությունների ձևավորման համար: Նշվածով պայմանավորված անհրաժեշտ է ապահովել հակակոռուպցիոն դատարանների դատավորների վերապատրաստումը կոռուպցիոն հանցագործությունների և համապատասխան</p>		<p>դատավորների առնվազն 30 տոկոսը վերապատրաստված են</p>	<p>վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության հարցումները առկա են Արդարադատության նախարարությունում</p>
--	---	--	--	---

	քաղաքացիական գործերի քննության բնագավառում գիտելիքների, հմտությունների զարգաման նպատակով			
<b>Պատասխանաբար մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Արդարադատության ակադեմիա</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 15.5 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ եռամսյակ</b>		
<b>8.</b> Նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն	Ներկայումս դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները բողոքարկելու իրավական հնարավորություն առկա է: Թեև Դատական օրենսգիրքը նախատեսում է նման որոշումները նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով	Մշակվել է «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն նախատեսող իրավական ակտի նախագիծը, որով նախատեսվում է Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումների բողոքարկման իրավական	Դատավորները իրավական հնարավորություն ունեն բողոքարկելու իրենց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները	«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու

	վերանայելու հնարավորությունը, սակայն նշվածը, ըստ էության, չի բավարարում նման որոշումների բողոքարկման, այն է՝ մեկ այլ մարմնի (կազմի) կողմից նույն (այլ ոչ թե նոր ի հայտ եկած) փաստերի և ապացույցների հիման վրա կայացված որոշման օրինականության և արժանահավատության ստուգումը:	հնարավորությունը (Բարձրագույն դատական խորհրդի շրջանակներում)		մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ եռամսյակ</b>		
<b>9.</b> Վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի	Ներկայումս դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի	Մշակվել է «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն նախատեսող	Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ	«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ նախատեսող

հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը	հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահանափակվում է 2-ով: Արդյունքում, հանձնաժողովի դատավոր անդամները, միևնույնն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում:	իրավական ակտի նախագիծը	դատավոր անդամների ձայների կշիռը բարձրացել է առնվազն 1 ձայնով	իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)
<b>Պատասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>10.</b> Ներդնել դատավորների բարեվարքության պարբերական գնահատման կառուցակարգեր	Ներկայումս Կառավարության առջև ծառայած հիմնական խնդիրներից է բարեվարք, կոռուպցիայից զերծ դատական համակարգի	Մշակվել են դատավորների բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսող	Դատավորների բարեվարքության պարբերական ստուգման կառուցակարգերը գործում են	Դատավորների բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսող իրավական ակտերի նախագծերը

	<p>ձևավորումը: Առկա կարգավորումները դատավորների բարեվարքության ստուգման սահմանափակ հնարավորություններ են տալիս՝ սահմանափակվելով միայն պաշտոն ստանձնելու, այդ թվում՝ առաջխաղացման, փուլերով:</p> <p>Մինչդեռ կարևոր է ապահովել դատավորների բարեվարքությունը նրանց գործունեության ողջ ընթացքում, ինչը հնարավոր է երաշխավորել միայն որոշակի պարբերականությամբ իրականացվող ստուգումների միջոցով, երբ կստուգվեն նրանց գոյքային դրությունը, անհամատեղելիության պահանջների պահպանվածությունը, շահերի բախման</p>	<p>իրավական ակտերի նախագծերը</p>		<p>ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	---	----------------------------------	--	--

	իրավիճակները և այլ սահմանափակումները			
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 5. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի պրակտիկ կիրառման ապահովում
- Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում կարողությունների հզորացում
- Քննչական մարմինների համակարգի բարեփոխում
- Դատախազների բարեվարքության ամրապնդում
- Քննիչների բարեվարքության ամրապնդում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Իրականացվել են քրեական արդարադատության ծեռնարկված արմատական բարեփոխումները</p>	<p>1. Իրավապահ համակարգը, ինչպես նաև Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունները վերազինվել են համապատասխան էլեկտրոնային և տեսահսկման համակարգերով</p> <p>2. Իրավապահ համակարգի, ինչպես նաև Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների կադրային բազան հզորացվել է, իրականացվում են շարունակական վերապատրաստումներ</p> <p>3. Դատախազների և քննիչների բարեվարքության ստուգման համապատասխան կառուցակարգերը ներդրվել են</p>	<p>1.1. Նախաքննական մարմիններն ունեն անհրաժեշտ նվազագույն տեխնիկական միջոցները քրեական վարույթի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով առկա են առնվազն 700 տեսախցիկներ</p> <p>1.2. Էլեկտրոնային հսկողության միջոցներով առնվազն 100 անձի նկատմամբ կիրառվում են կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցները (տնային կալանք, վարչական հսկողություն) և ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատիժները (ազատության սահմանափակում)</p> <p>1.3. Առնվազն 3 քրեակատարողական հիմնարկում առկա են տեսահսկման և օպերատիվ կառավարման համակարգեր</p> <p>2.1. Նախաքննության մարմինները համալրված են շուրջ 210, իսկ</p>



		<p>դատախազության համակարգը՝ 20 հաստիքային միավորներով</p> <p>2.2 Քննիչների, դատախազների և դատավորների շուրջ 70 տոկոսը վերապատրաստված է:</p> <p>2.3 Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունները համալրված են համապատասխանաբար 200 և 50 տեսական և գործնական պատրաստում անցած ծառայողներով</p> <p>2.4. Գործում է քննիչների թեկնածուների, ինչպես նաև առաջխաղացման ցուցակում ընդգրկված քննիչների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացման պարտադիր պահանջ</p> <p>2.5. Քննիչների թեկնածուների և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց շուրջ 30 տոկոսը անցել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում</p> <p>2.6. Քննիչների, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առնվազն 30 տոկոսը վերապատրաստված են կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննություն, էլեկտրոնային ապացույցների հետ</p>
--	--	--

		<p>աշխատելու հնտություններ ձեռք բերելու առնչությամբ</p> <p>2.7. Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է</p> <p>2.8. Դատախազների բարեվարքության պարբերական ստուգումների կառուցակարգերը գործում են</p> <p>2.9. Քննիչների բարեվարքության պարբերական ստուգման կառուցակարգերը գործում են</p>
--	--	--

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2023 թվականի 2-րդ կիսամյակ		
1. Վերագինել նախաքննության մարմիններին անհրաժեշտ տեխնիկական միջոցներով	Հաշվի առելով այն, որ ընդունվել է քրեական դատավարության նոր օրենսգիրքը՝ վերջինիս հիման վրա քննչական բոլոր գործողությունները, բացառությամբ տեղեկատվության պահանջի և	Նախաքննական մարմինները վերագինվել են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով	Քրեական դատավարության նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո Նախաքննական մարմինները ապահովվել են առնվազն 700 տեսախցիկներով	Գնման հայտը և համապատասխան փաստաթղթերը առկա են

	առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու, պետք է տեսաձայնագրվեն, սակայն ներկայումս նախաքննության ոչ բոլոր մարմիններն են ապահովված համապատասխան միջոցներով			
<b>Պարասխանադրու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Ազգային անվտանգության ծառայություն</li> <li>• Պետական եկամուտների կոմիտե</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 360.5 մլն ՀՀ դրամ (հաշվարկը կատարված է յուրաքանչյուր քննիչին՝ մեկ տեսախցիկ տրամադրելու սկզբունքով)</li> </ul>			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
2. Զինել Պրոբացիայի ծառայությանն էլեկտրոնային հսկողության անհրաժեշտ միջոցներով և ենթակառուցվածքներով՝	2021 թվականի հունիսի 30-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված քրեական դատավարության նոր օրենսգրքի անցումային	Պրոբացիայի ծառայությունում ներդրվել է էլեկտրոնային հսկողության համակարգ	Պրոբացիայի ծառայությունում առկա է առնվազն 200 միավոր էլեկտրոնային հսկողության շղթա, 150 միավոր ներտնային վերահսկման սարք, կառավարման	Առկա են անհրաժեշտ նախադրյալներ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման վերաբերյալ դատական ակտ կայացնելու համար

<p>կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների (տնային կալանք, վարչական հսկողություն) և ազատագրկման այլընտրանք հանդիսացող պատիժների (ազատության սահմանափակում) կիրառման նպատակով</p>	<p>դրույթների համաձայն՝ տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցներն ուժի մեջ են մտնելու 2023 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա չեն էլեկտրոնային հսկողության միջոցներ՝ 2022 թվականին իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ էլեկտրոնային հսկողության համալիր ձեռք բերելու նպատակով: Ըստ այդմ, հայտարարվել է գնման մրցույթ և առկա է հաղթող ճանաչված մասնակից:</p>		<p>ծրագրային ապահովում, ինչպես նաև սերվերային համալիր</p>	
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			

<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 220 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2022 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>3.</b> Ապահովել նախաքննություն իրականացնող մարմինների և դատախազության կադրային համալրվածությունը	<p>Քրեական դատավարության նոր օրենսգրքով ընդլայնվել է նախաքննություն իրականացնող մարմինների լիազորությունների շրջանակը: Դրան զուգահեռ, հետաքննությունը դարձել է նախաքննությանն օժանդակող գործունեություն՝ սահմանափակվելով միայն օպերատիվ-հետախուզական գործունեության և գաղտնի քննչական գործողությունների իրականացմամբ: Ըստ այդմ, անհրաժեշտ է ապահովել ռեսուրսների արդյունավետ բաշխումը՝ հիմքում ունենալով քրեական</p>	<p>Նախաքննության մարմինների և դատախազության համակարգի կադրային կարիքները գնահատվել են, իրականացվել են համալրման աշխատանքներ</p>	<p>Նախաքննության մարմինները համալրվել են շուրջ 210, իսկ դատախազության համակարգում 20 հաստիքային միավորներով</p>	<p>Նախաքննության մարմինների և դատախազության հաստիքացուցակը վերանայվել և հաստատվել է</p>

	վարույթի պատշաճ իրականացումը			
<b>Պատրասխանաբան մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Ազգային անվտանգության ծառայություն</li> <li>• Պետական եկամուտների կոմիտե</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե</li> <li>• Շուրջ 197 մլն ՀՀ դրամ (հավելյալ միջոցները կներգրավեն հետաքննիչների հաստիքների կրճատմամբ գոյացած խնայողությունների և վերաբաշխումների արդյունքում)</li> </ul>			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>4.</b> Մշակել քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի մեկնաբանություններ իրավակիրառ մարմինների համար	Հաշվի առնելով այն, որ երկու օրենսգրքերն էլ գաղափարական առումով նոր փոփոխություններ են նախատեսում քրեական արդարադատության ոլորտում՝ անհրաժեշտ է իրավակիրառ մարմիններին ուղեցուցային տարբերակով ներկայացնել դրանց բովանդակությունն ու պրակտիկ կիրառությունը	Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի մեկնաբանությունները մշակվել են	Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի մեկնաբանությունները մշակվել և հատկացվել են իրավակիրառ մարմիններին	Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի մեկնաբանությունները հատկացվել են իրավասու մարմիններին և հրապարակված են Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում

<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 21.6 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2026 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<p><b>5.</b> Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի վերաբերյալ վերապատրաստման դասընթացների իրականացում</p>	<p>Հաշվի առնելով այն, որ երկու օրենսգրքերն էլ գաղափարական առումով նոր փոփոխություններ են նախատեսում քրեական արդարադատության ոլորտում՝ անհրաժեշտ է իրավապահ մարմիններին վերապատրաստման դասընթացների միջոցով ներկայացնել դրանց բովանդակությունն ու պրակտիկ կիրառությունը</p>	<p>Քննիչները, դատախազները և դատավորները վերապատրաստվել են</p>	<p>Քննիչների, դատախազների և դատավորների շուրջ 70 տոկոսը վերապատրաստվել է</p>	<p>Քննիչները, դատախազների և դատավորների վերապատրաստման դասընթացների մոդուլները, ինչպես նաև վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության հարցումները առկա են Արդարադատության նախարարությունում</p>
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 30 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

		2023 թվականի 2-րդ կիսամյակ		
<p><b>6. Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելուց հետո դրանց գործնական կիրառման կապակցությամբ մոնիթորինգի իրականացում</b></p>	<p>Հաշվի առնելով, որ երկու օրենսգրքերն էլ գաղափարական առումով արմատական փոփոխություններ են նախատեսում քրեական արդարադատության ոլորտում՝ անհրաժեշտ է ապահովել համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը, որոնք ուղղված կլինեն օրենսգրքերով նախատեսված մի շարք նոր ինստիտուտների և կարգավորումների կիրառման կապակցությամբ գործնականում ծագող հնարավոր խնդիրների պարզմանը և վեր հանմանը՝ ապահովելով օրենսգրքերի սահուն գործողությունը, այդ թվում՝ առկա հնարավոր խոչընդոտների արդյունավետ ու օպերատիվ վերացումը</p>	<p>Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելուց հետո իրականացվել է մոնիթորինգ</p>	<p>Վեր են հանվել Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի դրույթների կիրառման կապակցությամբ գործնականում ծագող բոլոր խնդիրները</p>	<p>Իրականացված մոնիթորինգի արդյունքում վեր հանված խնդիրների վերաբերյալ կազմվել են համապատասխան զեկույցներ, անհրաժեշտության դեպքում մշակվել համապատասխան իրավական ակտեր կամ կազմակերպվել են համապատասխան վերապատրաստումներ</p>



<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 20 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<p>7. Կազմակերպել Քրեակատարողական ծառայությունում և Պրոբացիայի ծառայությունում բարեվարք և պրոֆեսիոնալ անձնակազմ ունենալու համար համապատասխան ծառայողների պատրաստումներ</p>	<p>Հաշվի առնելով Կառավարության՝ ազատագրկման ավանդական գաղափարախոսություն ից դեպի վերասոցիալականացման գաղափարախոսության անցման նպատակը՝ անհրաժեշտ է բարեփոխել նաև քրեակատարողական գործող համակարգը՝ պատրաստելով այնպիսի կադրեր, որոնք գործնականում կստեղծեն նախադրյալներ արդարադատության ոլորտի բարեփոխումները նաև քրեակատարողական համակարգում</p>	<p>Քրեակատարողական ծառայությունում բարեվարք և պրոֆեսիոնալ անձնակազմ ունենալու համար պատրաստվել են քրեակատարողական ծառայողներ</p>	<p>6.1. Քրեակատարողական ծառայությունը համալրվել է տեսական և գործնական պատրաստում և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում անցած 200 ծառայողներով 6.2. Պրոբացիայի ծառայությունը համալրվել է տեսական և գործնական պատրաստում և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում անցած 50 ծառայողներով</p>	<p>Քրեակատարողական ծառայողների հատուկ ծրագրով պատրաստման մոդուլները առկա են Արդարադատության նախարարությունում: Պատրաստման արդյունքում տրվել են հավաստագրեր</p>

	ամրապնդելու համար (ներկայումս Քրեակատարողական ծառայությունում առկա է 2061 հաստիք, իսկ Պրոբացիայի ծառայությունում՝ 158)			
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 15 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 1-ին եռամսյակ</b>		
<b>8.</b> Մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ	Ներկայումս՝ էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ առկա է են օրենսդրական համապատասխան կարգավորումներ քրեական դատավարության շրջանակներում իրականացվող մի շարք գործառույթների էլեկտրոնային	Մշակվել է Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ	7.1. Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսն իրականացվում է էլեկտրոնային եղանակով 7.2. Քրեական դատավարական առնվազն 3 գործողություն իրականացվում է էլեկտրոնային	Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության

	եղանակով իրականացումն ապահովելու համար: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում վերանայել դատավարական համապատասխան օրենսդրական կարգավորումները		եղանակով	որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Ազգային անվտանգության ծառայություն</li> <li>• Պետական եկամուտների կոմիտե</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>9. Ներդնել դատախազների բարեվարքության պարբերական գնահատման կառուցակարգեր</b>	Ներկայումս Կառավարության առջև ծառայած հիմնական խնդիրներից է բարեվարք, կոռուպցիայից զերծ քննչական համակարգի ձևավորումը: Առկա կարգավորումները	Մշակվել են դատախազների բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսող իրավական ակտերի նախագծերը	Դատախազների բարեվարքության պարբերական ստուգման կառուցակարգերը գործում են	Դատախազների բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսող իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի

	<p>դատախազների բարեվարքության ստուգման սահմանափակ հնարավորություններ են տալիս՝ սահմանափակվելով միայն պաշտոն ստանձնելու, այդ թվում առաջխաղացման փուլերով:</p> <p>Մինչդեռ կարևոր է դատախազների բարեվարքությունը նրանց գործունեության ողջ ընթացքում, ինչը հնարավոր է երաշխավորել միայն որոշակի պարբերականությամբ իրականացվող ստուգումների միջոցով, երբ կստուգվեն նրանց գոյքային դրությունը, անհամատեղելիության պահանջների պահպանվածությունը, շահերի բախման իրավիճակները և այլ սահմանափակումները</p>			<p>աշխատակազմ:  Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում  (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	--	--	--	---

<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</li> <li>• Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<p><b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b></p>		
<p><b>10.</b> Ներդնել քննիչների բարեվարքության պարբերական գնահատման կառուցակարգեր</p>	<p>Ներկայումս Կառավարության առջև ծառայած հիմնական խնդիրներից է բարեվարք, կոռուպցիայից զերծ քննչական համակարգի ձևավորումը: Առկա կարգավորումները քննիչների բարեվարքության ստուգման սահմանափակ հնարավորություններ են տալիս. ներկայումս նման ընթացակարգ նախատեսված է միայն Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ պաշտոն ստանձնելու փուլում:</p>	<p>Մշակվել են քննիչների բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսող իրավական ակտերի նախագծերը</p>	<p>Քննիչների բարեվարքության պարբերական ստուգման կառուցակարգերը գործում են</p>	<p>Քննիչների բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսող իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

	<p>Մինչդեռ կարևոր է ապահովել բոլոր քննչական մարմինների քննիչների բարեվարքությունը նրանց գործունեության ողջ ընթացքում, ինչը հնարավոր է երաշխավորել միայն որոշակի պարբերականությամբ իրականացվող ստուգումների միջոցով, երբ կստուգվեն նրանց գույքային դրությունը, անհամատեղելիության պահանջների պահպանվածությունը, շահերի բախման իրավիճակները և այլ սահմանափակումները</p>			
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</li> <li>• Ազգային անվտանգության ծառայություն</li> <li>• Պետական եկամուտների կոմիտե</li> <li>• Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Քաղաքացիական օրենսդրության բարեփոխում
- Քաղաքացիական դատավարության օրենսդրության վերանայում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորումը և դրանց դատական պաշտպանության հնարավորությունները առավելապես զարգացած են</p>	<p>1. Բարելավվել է քաղաքացիական օրենսդրությունը                  2. Բարելավվել է քաղաքացիական դատավարության օրենսդրությունը</p>	<p>1.1. Էլեկտրոնային պայմանագրերը կնքվում են դրանց ձևի, անձանց կամքի արտահայտման, կնքման եղանակներին ներկայացվող, ժամանակակից տեխնիկական պահանջներից բխող իրավական կարգավորումներին համապատասխան                  1.2. Սահմանված են սպառողների հետ կնքվող միանալու պայմանագրերի կամ դրանց անբաժանելի մաս կազմող ընդհանուր պայմանների «անարդար» պայմաններ (առնվազն 5 հիմք)                  1.3. Պարտավորությունների կատարման ապահովման առնվազն 1 եղանակի առնչությամբ իրավակարգավորումները վերանայվել են                  1.4. Շարժական գույքի գրավադրման դեպքերի առնվազն 70 տոկոսը կատարվում են շարժական գույքի գրավադրման վերաբերյալ հատուկ իրավակարգավորումներին համապատասխան</p>

		<p>1.5. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները գործում են դրանց ստեղծմանը, կառավարմանը, մասնակիցների իրավունքներին և պարտականություններին ներկայացվող վերանայված իրավակարգավորումներին համապատասխան</p> <p>2.1. Վճարել բողոքների վերադարձի դեպքերի շուրջ 20 տոկոսը իրականացվում են վճարել դատարանի գրասենյակի կողմից</p> <p>2.2. Քաղաքացիական դատավարության 2018թ.-ի օրենսգրքի գործնական կիրառման արդյունքում բացահայտված խնդիրների շուրջ 50 տոկոսը վերհանված և գույքագրված են</p> <p>2.3. Քաղաքացիական դատավարության 2018թ.-ի օրենսգրքի գույքագրված խնդիրների առնվազն 60 տոկոսը ստացել են</p> <p>2.4. Քաղաքացիական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է</p>
--	--	--

<b>Գործողություն</b>		<b>Թիրախն ըստ փուլերի</b>	<b>Թիրախային ցուցանիշ</b>	
----------------------	--	---------------------------	---------------------------	--



	<b>Բազային ցուցանիշ (Ելակետային դրություն)</b>	<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>	<b>(արդյունք)</b>	<b>Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)</b>
<p>1. Ուսումնասիրել էլեկտրոնային պայմանագրերի, պայմանագրերի օրինակելի (ընդհանուր) պայմանների, սպառողների հետ կնքվող պայմանագրերի շրջանակներում նրանց իրավունքների պաշտպանության կարիքները, քաղաքացիական օրենսգրքում պետական կարիքների համար մատակարարման մասին գործող կարգավորումները և ըստ անհրաժեշտության մշակել վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ</p>	<p>Ներկայումս պայմանագրային իրավունքի առանձին հարցեր կարիք ունեն ուսումնասիրության՝ էլեկտրոնային պայմանագրերի ձևի, կնքման եղանակների, կամքի արտահայտման և այլ ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխանությամբ և այլ ուղղությունները վեր հանելու նպատակով: Իր հերթին, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև սպառողների հետ կնքվող պայմանագրերի շրջանակում վերջիններիս իրավունքների պաշտպանության կառուցակարգերի զարգացումը, ինչպես</p>	<p>Մշակվել է Քաղաքացիական օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթ</p>	<p>1.1. Էլեկտրոնային պայմանագրերը կնքվում են դրանց ձևի, անձանց կամքի արտահայտման, կնքման եղանակներին ներկայացվող, ժամանակակից տեխնոլոգիական պահանջներից բխող իրավական կարգավորումներին համապատասխան 1.2. Սահմանված են սպառողների հետ կնքվող միանալու պայմանագրերի կամ դրանց անբաժանելի մաս կազմող ընդհանուր պայմանների «անարդար» պայմաններ (առնվազն 5 հիմք)</p>	<p>Քաղաքացիական օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

իրավական ակտերի նախագիծ	նաև պետական կարիքների համար մատակարարման հարցերը կանոնակարգող առանձին հարցերը			
<b>Պատասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
2. Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտը	Ներկայումս ՀՀ վճռաբեկ դատարանի գրասենյակը վճռաբեկ բողոքների ստացման փուլում՝ ուսումնասիրելով և նկատելով այնպիսի ակնհայտ տեխնիկական բացթողումներ, ինչպիսիք են օրինակ բողոքին որպես կից նշված փաստաթղթերի բացակայությունը՝ կազմում է փաստաթղթերի բացակայության վերաբերյալ ակտ:	Մշակվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ	Վճռաբեկ բողոքների վերադարձի դեպքերի շուրջ 20 տոկոսը իրականացվում են վճռաբեկ դատարանի գրասենյակի կողմից	Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում

	Գործնականում նաև առկա են դեպքեր, երբ Վճռաբեկ դատարանը նույն հիմքով վերադարձնում է վճռաբեկ բողոքը, ինչը հանգեցնում է գործի քննության ժամկետի արհեստական երկարաձգմանը			(Կառավարության պաշտոնական կայքէջ)
<b>Պարասխանադրում</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>3.</b> Ուսումնասիրել պարտավորությունների կատարման ապահովման իրավական կարգավորումները և դրանցում համապատասխան փոփոխությունների կատարման կարիքները և ըստ անհրաժեշտության մշակել	Ներկայումս կարիք է առաջացել ուսումնասիրել պարտավորությունների կատարման ապահովման առանձին տեսակների իրավակարգավորումները, ինչի արդյունքում կարող է բացահայտվել դրանց վերանայման և տնտեսության ու շուկայի ժամանակակից	Մշակվել է Քաղաքացիական և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթ, կամ ուսումնասիրություն, որով արձանագրվում է փոփոխությունների	3.1. Պարտավորությունների կատարման ապահովման առնվազն 1 եղանակի առնչությամբ իրավակարգավորումները վերանայվել են 3.2. Շարժական գույքի գրավադրման դեպքերի առնվազն 70 տոկոսը կատարվում են շարժական գույքի գրավադրման վերաբերյալ հատուկ	Քաղաքացիական օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ կամ փոփոխությունների անհրաժեշտությունը

<p>Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագիծ</p>	<p>պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությունը: Մասնավորապես, գործնականում խնդիրներ են առաջանում շարժական գույքը երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնելու (ապահովված իրավունք) հարաբերություններում, երբ կիրառվում են ոչ թե ապահովված իրավունքի, այլ գրավի վերաբերյալ իրավակարգավորումները</p>	<p>անհրաժեշտության բացակայությունը</p>	<p>իրավակարգավորումներին համապատասխան</p>	<p>բացառող ուսումնասիրությունը առկա է Արդարադատության նախարարությունում: Նախագծերի փաթեթի առկայության դեպքում ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պատասխանարումներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<p><b>2024 թվականի 1-ին կիսամյակ</b></p>		
<p>4. Առևտրային կազմակերպությունների վերաբերյալ իրավակարգավորումները համապատասխանեցնել կորպորատիվ իրավունքի ժամանակակից մոտեցումներին</p>	<p>Կորպորատիվ իրավահարաբերությունների կարգավորման ուղղությամբ Հայաստանի օրենսդրության շրջանակներում արդեն իսկ կատարվել են</p>	<p>Մշակվել է առևտրային իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ</p>	<p>Առևտրային իրավաբանական անձինք գործում են դրանց ստեղծմանը, կառավարմանը, մասնակիցների իրավունքներին և պարտականությունների</p>	<p>Առևտրային իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենքների փոփոխություններ նախատեսող նորմատիվ</p>

	<p>գործուն քայլեր՝ վերանայելով բաժնետիրական ընկերությունների հետ կապված իրավական կարգավորումները: Միաժամանակ, ոլորտի առավել համալիր կարգավորման տեսանկյունից անհրաժեշտ է վերանայել կազմակերպատիրավական այլ ձևերի գործունեությունը կարգավորող իրավական դաշտը և նախատեսել առևտրային կազմակերպությունների իրավահարաբերությունները կարգավորող համապարփակ օրենսդրություն, որը կպարունակի կորպորատիվ կառավարման ժամանակակից լուծումներ, կնպաստի կապիտալ շուկայի զարգացմանը և ընդհանուր առմամբ ողջ</p>	<p>իրավական ակտի նախագիծ</p>	<p>ն ներկայացվող վերանայված իրավակարգավորումներին համապատասխան</p>	<p>իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	---	------------------------------	--	--

	կորպորատիվ միջավայրը կդարձնի ներդրողների համար առավել գրավիչ			
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Էկոնոմիկայի նախարարություն (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>5. Գույքագրել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում արձանագրված խնդիրները</b>	Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի կիրառման արդյունքում դատական պրակտիկայում բացահայտվել են տարբեր խնդիրներ, որոնք անհրաժեշտ է վեր հանել և գույքագրել՝ քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը ապահովելու նպատակով	Կատարվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում արձանագրված խնդիրները գույքագրող ուսումնասիրություն	Քաղաքացիական դատավարության 2018թ.-ի օրենսգրքի գործնական կիրառման արդյունքում բացահայտված խնդիրների շուրջ 50 տոկոսը վերհանված և գույքագրված են	Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում արձանագրված խնդիրները գույքագրող ուսումնասիրությունը առկա է Արդարադատության նախարարությունում

<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<p><b>6.</b> Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում գույքագրված խնդիրների հիման վրա մշակել</p> <p>Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի փաթեթ</p>	<p>Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի կիրառման արդյունքում արձանագրված և գույքագրված խնդիրների ուսումնասիրության հիման վրա անհրաժեշտություն է առաջանալու մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ</p>	<p>Մշակվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի փաթեթ, կամ ուսումնասիրություն, որով արձանագրվում է փոփոխությունների անհրաժեշտության բացակայությունը</p>	<p>Քաղաքացիական դատավարության 2018թ.-ի օրենսգրքի գույքագրված խնդիրների առնվազն 60 տոկոսը օրենսդրական լուծում են ստացել</p>	<p>Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ կամ փոփոխությունների անհրաժեշտությունը բացառող ուսումնասիրությունը առկա է</p> <p>Արդարադատության նախարարությունում: Նախագծերի փաթեթի առկայության դեպքում ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու</p>

				մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ եռամսյակ</b>		
7. Մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ	Ներկայումս՝ էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ առկա է են օրենսդրական համապատասխան կարգավորումներ քաղաքացիական դատավարության շրջանակներում իրականացվող մի շարք գործառույթների էլեկտրոնային եղանակով իրականացումն	Մշակվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ	7.1. Քաղաքացիական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է 7.2. Քաղաքացիական դատավարական առնվազն 5	Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության



	<p>ապահովելու համար: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում վերանայել դատավարական համապատասխան օրենսդրական կարգավորումները</p>		<p>գործողություն (էլեկտրոնային հայցադիմումների, հակընդդեմ հայցերի, էլեկտրոնային պատասխանների, ապացույցների, միջնորդությունների ներկայացում) էլեկտրոնային եղանակով իրականացնելու օրենսդրական հնարավորությունը ապահովված է</p>	<p>պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պատասխանաբու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 7. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Վարչական դատավարության օրենսդրության վերանայում
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության բարեփոխում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Վարչական արդարադատության ոլորտում անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության միասնականությունը, կանոնակարգվածությունն ու համակարգվածությունը մեծապես երաշխավորված են</p>	<p>1. Բարելավվել է վարչական դատավարության օրենսդրությունը                  2. Ապահովվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության միասնականությունը</p>	<p>1.1. Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման կապակցությամբ առաջացած և բացահայտված խնդիրների ու բացերի շուրջ 50 տոկոսը վերհանված և գույքագրված են                  1.2. Վարչական դատավարության օրենսգրքի գույքագրված խնդիրների շուրջ 60 տոկոսը ստացել է օրենսդրական լուծում                  1.3. Վարչական դատավարության շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է                  2.1. Վարչական իրավախախտումները, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը</p>

		կողիֆիկացված են մեկ իրավական ակտում 2.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության և գործող օրենսդրության միջև բացահայտված հակասությունները շուրջ 70 տոկոսով վերացված են
--	--	--

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2022 թվականի 2-րդ կիսամյակ		
1. Գույքագրել վարչական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում ծագած խնդիրներն ու բացերը	Վարչական դատավարության օրենսգրքն ուժի մեջ է մտել 2014 թվականին, որից հետո դրա կիրառման պրակտիկայում բացահայտվել են բազմաթիվ օրենսդրական բացեր, որոնցից որոշները իրենց լուծումն են ստացել միայն Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների մակարդակում, որոշ կարգավորումներ ճանաչվել են հակասահմանադրական,	Մշակվել է Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում բացահայտված օրենսդրական խնդիրները գույքագրող ուսումնասիրություն	Վարչական դատավարության օրենսգրքի գործնական կիրառման արդյունքում բացահայտված բացերի ու խնդիրների շուրջ 50 տոկոսը վերհանված և գույքագրված են	Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում բացահայտված օրենսդրական խնդիրները գույքագրող ուսումնասիրությունը առկա է Արդատադատության նախարարությունում

	իսկ որոշ կարգավորումներ էլ չեն համապատասխանում հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումներին կամ այլևս արդյունավետ չեն			
<b>Պարասխանագրումարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
2. Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման արդյունքում գույքագրված խնդիրների հիման վրա մշակել Վարչական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող չորմատիվ իրավական ակտերի փաթեթ	Ներկայումս. - քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը մնացել է չլուծված և դատական պրակտիկայում ստանում է իրարամերժ մեկնաբանություններ - Վարչական դատավարության	Մշակվել է Վարչական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթ	2.1. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության դեմ բոլոր բողոքները ներկայացվում են դատավարական հստակ ընթացակարգերին համաձայն 2.2. Դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցումը ապահովվում է	Վարչական դատավարության օրենսգրքում և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական

	<p>օրենսգրքով նախատեսված ծանուցումների համակարգը պարտավորեցնում է դատարաններին ծանուցումները իրականացնել հիմնականում փոստի միջոցով՝ առանց որևէ տարբերակման՝ կախված սուբյեկտի կարգավիճակից կամ այլ հանգամանքից, և ծախսարդյունավետ չէ - Վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարույթի նյութերը տրամադրելիս ապահովում է պետական և ծառայողական գաղտնիքի, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքների, այդ թվում՝ առևտրային գաղտնիքի պահպանությունը, մինչդեռ նման տեղեկությունները</p>		<p>ծանուցման ժամանակակից եղանակների միջոցով 2.3. Օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկությունները վարչական դատավարության շրջանակներում պահպանվում են 2.4. Առկա են վարչական դատավարության ընթացքը տեսաձայնային հաղորդակցության գործիքների կիրառմամբ ապահովելու հնարավորություններ 2.5. Վերանայվել են վարչական դատավարության առնվազն 2 հատուկ վարույթներ կարգավորող իրավական ինստիտուտներ 2.6. Կիրառվում են կարգավորումներ, որոնք 80 տոկոսով բացառում են ապացույցներ ներկայացնելու և</p>	<p>նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	---	--	---	---

	<p>դատական քննության շրջանակում հասանելի են դառնում դատավարական գործի բոլոր մասնակիցներին - Վերջին շրջանում կորոնավիրուսային հինանդությամբ պայմանավորված դատական նիստերին տեսաձայնային կապի միջոցներով մասնակցելու հարցն առավել մեծ կարևորություն է ստացել: Այս առումով, վարչական դատավարության օրենսգրքով թեև նախատեսված է դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառման հնարավորություն, սակայն, ի տարբերություն քաղաքացիական դատավարության օրենսգրքի, այն մանրամասն կարգավորված չէ</p>		<p>դատական ակտերը բողոքարկելու իրավունքների իրականացման չարաշահումը  2.7. Գործում է դատական ակտերի անվերապահ բեկանման առնվազն 3 հիմք  2.8. Վճռաբեկ բողոքների վերադարձի դեպքերի շուրջ 20 տոկոսը իրականացվում են Վճռաբեկ դատարանի գրասենյակի կողմից  2.9. Կանոնակարգված են դատավարության մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դատական քննության ընթացքում նոր ապացույցներ ներկայացնելու դեպքերը և կարգը</p>	
--	--	--	--	--

	<p>- Վարչական դատավարությունում նախատեսված որոշ հատուկ վարույթներ չեն համապատասխանում հատուկ վարույթների էությանն ու տրամաբանությանը՝ ունենալով շատ քիչ առանձնահատկություններ ընդհանուր վարույթից կամ կարգավորելով այնպիսի վեճերի լուծումը, որտեղ առկա են նյութափրավական վեճ և դրա կապակցությամբ հակադիր շահերով կողմեր և այլն</p> <p>- Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1565 որոշմամբ արձանագրվել է, որ Վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանափակելով</p>			
--	--	--	--	--

	<p>վարչական մարմնի՝  վարչական գործի  դատական քննության  ընթացքում նոր  ապացույցներ  ներկայացնելու  հնարավորությունը,  չպետք է  սահմանափակի  անձանց՝ գործի  արդարացի լուծման  համար նշանակություն  ունեցող նոր  ապացույցներ  ներկայացնելու  հնարավորությունը:  Նման մեկնաբանության  պայմաններում  դատավարության  մասնակից ֆիզիկական  և իրավաբանական  անձինք կարող են  չարաշահել դատական  քննության ընթացքում  նոր ապացույցներ  ներկայացնելու  իրավունքը  - Բազմաթիվ են  դեպքերը, երբ  չարաշահելով բողոք</p>			
--	--	--	--	--



	<p>ներկայացնելու իրավունքը, դատավարության կողմերը անհարկի ծանրաբեռնում են վարչական դատարաններին՝ այդպիսով խոչընդոտելով ինչպես վարչական արդարադատության պատշաճ իրականացումը, այնպես էլ խախտելով հակառակ կողմի իրավունքները և շահերը</p> <p>- Վարչական վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում: Գործնականում լինում են դեպքեր, երբ առկա են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքեր, որոնց բողոքաբերը բողոքում չի անդրադարձել: Մինչդեռ դատական ակտի անվերապահ բեկանման</p>			
--	---	--	--	--

	<p>որոշ հիմքերի առկայության դեպքում դատական ակտի վերանայումն անհնար է դառնում</p> <p>- Վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաքննիչ վարչական դատարանին լիազորություն չի վերապահում բավարարելու վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, ՍԴՈ-1579 որոշմամբ ճանաչվել է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր</p> <p>- Վճռաբեկ դատարանի գրասենյակը, վճռաբեկ բողոքների ստացման</p>			
--	--	--	--	--

	<p>փուլում ուսումնասիրելով և նկատելով այնպիսի ակնհայտ տեխնիկական բացթողումներ, ինչպիսիք են, օրինակ, բողոքին որպես կից նշված փաստաթղթերի բացակայությունը, կազմում է փաստաթղթերի բացակայության վերաբերյալ ակտ: Գործնականում նաև առկա են դեպքեր, երբ Վճռաբեկ դատարանը նույն հիմքով վերադարձնում է վճռաբեկ բողոքը, ինչը հանգեցնում է գործի քննության ժամկետի արհեստական երկարաձգման</p>			
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

		2023 թվականի 2-րդ եռամսյակ		
<p><b>3.</b> Մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ</p>	<p>Ներկայումս՝ էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը զուգահեռ առկա է օրենսդրական համապատասխան կարգավորումներ վարչական դատավարության շրջանակներում իրականացվող մի շարք գործառույթների էլեկտրոնային եղանակով իրականացումն ապահովելու համար: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում վերանայել դատավարական համապատասխան օրենսդրական կարգավորումները</p>	<p>Մշակվել է Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ</p>	<p>3.1. Վարչական դատավարության շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է</p> <p>3.2. Դատավարական առնվազն 5 գործողություն (էլեկտրոնային հայցադիմումների, հակընդդեմ հայցերի, էլեկտրոնային պատասխանների, ապացույցների, միջնորդությունների ներկայացում) էլեկտրոնային</p>	<p>Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

			եղանակով իրականացնելու օրենսդրական հնարավորությունը ապահովված է	
<b>Պարասխանադրու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Պետական կառավարման համակարգի մարմիններ</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>4.</b> Կատարելագործել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը	Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված և 1986թ. հունիսի 6-ին կիրառության մեջ դրված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը: Օրենսգրքի ընդունումից հետո այն բազմիցս ենթարկվել է հատվածային, երբեմն իրար հակասող	Մշակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ	4.1. Անցկացվել են առնվազն 2 հանրային քննարկումներ՝ տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ 4.2. Վարչական իրավախախտումները, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության հետ կապված իրավահարաբերություն ները կարգավորող իրավական նորմերը կողմից ֆիկացված են մեկ իրավական ակտում 4.3. Վարչական իրավախախտումների	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծը ներկայացվել է և Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)

	<p>փոփոխությունների, սակայն Հայստանի Հանրապետության ամբողջ օրենսդրության տարամաբանության համատեքստում այդպես էլ համակարգային և համապարփակ վերանայման չի ենթարկվել:</p> <p>Արդյունքում օրենսգրքում կան բազմաթիվ հնացած և գործնական կիրառում չունեցող, գործող օրենսդրությանը հակասող դրույթներ, վարչական պատասխանատվության թերի և ոչ լիարժեք միջոցներ:</p> <p>Արդյունքում այն չի համապատասխանում իրավական հարաբերությունները պատշաճ կարգավորելու արդի պահանջներին</p>		<p>վերաբերյալ օրենսդրության և գործող օրենսդրության միջև բացահայտված հակասությունները շուրջ 70 տոկոսով վերացված են</p> <p>4.4. Գործում են վարչական իրավախախտումների համար համաչափ վարչական տույժերի կիրառումն ապահովող կարգավորումներ</p>	
--	---	--	--	--

<b>Պատասխանաբու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Պետական կառավարման համակարգի մարմիններ</li> </ul>
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային և դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Տարեկան շուրջ 12 մլն ՀՀ դրամ՝ որպես ներգրավված փորձագետների վարձատրության գումար</li> </ul>

**ՆՊԱՏԱԿ 8. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություն՝**

- Մնանկության ունիվերսալ օրենսդրության մշակում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Մնանկության վարույթի մասնակիցների դատական պաշտպանության իրավունքը և սնանկության վարույթի արդյունավետությունը առավելագույնս երաշխավորված են</p>	<p>1. Մնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայում ծագած և վերհանված խնդիրները հիմնականում լուծված են</p>	<p>1.1. Մնանկության բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները կարգավորվել են մեկ միասնական իրավական ակտով, որով լուծվել են սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայում բացահայտված խնդիրների առնվազն 70 տոկոսը</p> <p>1.3. Մնանկության գործերի քննության ժամկետները կրճատվել են առնվազն 20 տոկոսով</p> <p>1.4. Ֆինանսական առողջացումների դեպքերի թիվը ավելացել է շուրջ 10 տոկոսով</p> <p>1.5. Գործում են սնանկության առնվազն 3 հատուկ ընթացակարգեր՝ առանձին սուբյեկտների և անդրսահմանային սնանկության համար</p> <p>1.6. Մնանկության վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է</p>



Գործողություն	Բազային ցուցանիշ (Ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2023 թվականի 2-րդ կիսամյակ		
<p>1. «Սնանկության մասին» օրենքի բարեփոխումների շրջանակում անդրադարձ չկատարված և արդիական կարիքները, ինչպես նաև սնանկության բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները մեկ միասնական իրավական ակտով կարգավորելուն ուղղված օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի մշակում և քննարկում</p>	<p>Ներկայումս. - սնանկության ոլորտի մի շարք արդիական ուղղություններ և կարիքներ ուսումնասիրված չեն, - սնանկության վարույթի առնչությամբ բոլոր նյութական և ընթացակարգային ասպեկտները կարգավորվում են տարբեր իրավական ակտերով</p>	<p>«Սնանկության մասին» օրենքում կատարված փոփոխությունների շրջանակում չարտացոլված խնդիրները և ոլորտը կարգավորող մեկ միասնական իրավական ակտի նախատեսման նպատակահարմարությունը և ուղղությունները վեր են հանվել և նախանշվել</p>	<p>1.1. Սնանկության ոլորտում առկա արդիական ուղղությունների և կարիքների ավելի քան 80 տոկոսը բացահայտված են 1.2. Շահագրգիռ թիրախային խմբերի առնվազն 50 տոկոսը մասնակցել է սնանկության ոլորտի կարիքների բացահայտման և կարգավորման ուղղությունները նախորոշելու նպատակով անցկացված քննարկումներին 1.3. Հայեցակարգի հիման վրա ուրվագծվել են սնանկության մասին օրենսդրության մեկ միասնական իրավական ակտի հիմնական բովանդակությունը,</p>	<p>Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվել է սնանկության օրենսդրության բարեփոխման հայեցակարգը, Արդարադատության նախարարությունում առկա են շահագրգիռ շրջանակների հետ հայեցակարգի վերաբերյալ քննարկումների ամփոփումները</p>

			կառուցվածքը, կարգավորման ուղղությունները և լուծումները	
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Էկոնոմիկայի նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 227 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2024 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
2. Հայեցակարգի հիման վրա վեր հանված կարիքների և ուրվագծված խնդիրների համատեքստում սնանկության մասին օրենսդրության մեկ միասնական իրավական ակտի նախագծի մշակում և քննարկում	Մշակված հայեցակարգի հիման վրա անհրաժեշտություն է առաջանալու վերանայել սնանկության օրենսդրությունը: Միևնույն ժամանակ, սնանկության վարույթում ներկայումս. - լուծարման և առողջացման գործընթացները առանձնացված չեն, իսկ առողջացման կամ լուծարման գործընթացների	Մշակվել են սնանկության մասին մեկ միասնական իրավական ակտի և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերի նախագծեր	2.1. Օրենսդրական փաթեթի ընդունմամբ լուծվել են սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայում բացահայտված խնդիրների առնվազն 70 տոկոսը 2.2. Օրենսդրական փաթեթն ընդունվելուց հետո երկու տարվա ընթացքում սնանկության գործերի քննության ժամկետները կրճատվել են առնվազն 20 տոկոսով 2.3. Օրենսդրական	Սնանկության մասին միասնական իրավական ակտի և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)

	<p>ներդրման ժամկետները տարբեր են,</p> <ul style="list-style-type: none"> <li>- հստակեցված չեն սնանկության վարույթի հնարավոր բոլոր կողմերի և մասնակիցների կարգավիճակները, այդ թվում՝ մասնագիտացված կազմակերպությունների՝ որպես սնանկության կառավարիչ հանդես գալու հնարավորությունը,</li> <li>- ֆիզիկական անձանց սնանկության վերաբերյալ իրավակարգավորումները թերի են,</li> <li>- սնանկության վարույթի ժամկետները որոշ դեպքերում բավականին երկար են,</li> <li>- առկա են կոռուպցիոն ռիսկեր պարունակող որոշ կարգավորումներ,</li> <li>- բավարար չափով կանոնակարգված չեն սնանկության վարույթում կառավարչի կողմից պարտապանի սեփականության և</li> </ul>		<p>փաթեթն ընդունվելուց երկու տարվա ընթացքում ֆինանսական առողջացումների դեպքերի թիվը ավելացել է շուրջ 10 տոկոսով 2.4. Օրենսդրական փոփոխությունների արդյունքում գործում են սնանկության առնվազն 3 հատուկ ընթացակարգեր՝ առանձին սուբյեկտների և անդրսահմանային սնանկության համար</p>	
--	--	--	---	--

	<p>բիզնեսի կառավարման հարցերը,</p> <ul style="list-style-type: none"> <li>- սնանկության վարույթում նախատեսված չէ թույլատրելի ծախսերի համակարգ,</li> <li>- առկա չեն անդրազգային սնանկության վերաբերյալ իրավակարգավորումներ,</li> <li>- առանձին սուբյեկտների համար նախատեսված չեն անհրաժեշտ սնանկության հատուկ ընթացակարգեր</li> </ul>			
<b>Պարասխանաբանական մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Էկոնոմիկայի նախարարություն (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Արժեքը նախատեսված է 1-ին գործողության ֆինանսավորման շրջանակներում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ եռամսյակ</b>		
<b>3.</b> Մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման	Ներկայումս՝ էլեկտրոնային արդարադատության	Մշակվել է «Սնանկության մասին» օրենքում	Սնանկության վարույթի շրջանակներում իրականացվող	Վարչական դատավարության օրենսգրքում

<p>հիման վրա «Սնանկության մասին» օրենքի փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ</p>	<p>գործիքների ներդրմանը զուգահեռ առկա չեն օրենսդրական համապատասխան կարգավորումներ սնանկության վարույթի շրջանակներում իրականացվող մի շարք գործառույթների էլեկտրոնային եղանակով իրականացումն ապահովելու համար: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում վերանայել դատավարական համապատասխան օրենսդրական կարգավորումները</p>	<p>փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ</p>	<p>դատական գործառույթների առնվազն 20 տոկոսի էլեկտրոնային եղանակով իրականացման օրենսդրական հնարավորությունը ապահովված է</p>	<p>փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Պետական կառավարման համակարգի մարմիններ</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծում
- Արբիտրաժային օրենսդրության կատարելագործում
- Հաշտարարության օրենսդրության կատարելագործում
- Հաշտարարության ոլորտի բարեփոխումների իրականացման ապահովում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Հայաստանում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների ինստիտուտը զարգացած է և դրական ազդեցություն է ունեցել դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման վրա</p>	<p>1. Հայաստանում ստեղծվել է նոր արբիտրաժային կենտրոն                  2. Հաշտարարության որակն ու դերն էապես բարձրացել են</p>	<p>1.1. Հայաստանում արբիտրայաժին կարգով քննվում են ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային առևտրային վեճեր                  1.2. Արբիտրաժային նոր կենտրոնի միջոցով ապահովվում է գործերի էլեկտրոնային կառավարումը, ինչի արդյունքում կենտրոնի կողմից քննվող գործերի 50 տոկոսը գործի քննության տարբեր փուլերում (ներառյալ՝ հայցի ներկայացման փուլը) կառավարվում են էլեկտրոնային համակարգի միջոցով                  1.3. Փոքր հայցապահանջներով գործերի 30 տոկոսը լուծվում է արբիտրաժային կարգով՝ նոր կենտրոնի կողմից                  1.4. Արբիտրաժային նոր կենտրոնի գործունեության արդյունքում դատարանների ծանրաբեռնվածությունը նվազել է 20 տոկոսով                  2.1. Հայաստանում ներդրվել և գործում է առցանց հաշտարարություն</p>

		<p>իրականացնելու համակարգ  2.2. Ընտանեկան գործերի 70 տոկոսով  իրականացվում է պարտադիր  հաշտարարություն, ինչի արդյունքում  ընտանեկան գործերով  մինչև 30 տոկոսով ավելացել է  հաշտության դեպքերի քանակը, և  համապատասխանաբար նվազել է  դատարանների՝ ընտանեկան գործերով  ծանրաբեռնվածությունը  2.3. Ընդհանուր առմամբ հաշտության  իրականացման դեպքերի քանակն  ավելացել է մինչև 15 տոկոսով  2.4. Փաստացի գործող հաշտարարների  թիվն ավելացել է մինչև 40 տոկոսով  2.5. Գործում են հաշտարարների  որակավորման և վերապատրաստման  նոր կարգ ու ծրագիր, որոնց հիման վրա  օրենսդրական փոփոխություններից մեկ  տարի հետո որակավորվել կամ  վերապատրաստվել են առնվազն 30  հաշտարար</p>
--	--	---

Գործողություն	Բազային ցուցանիշ (Ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2022 թվականի 2-րդ կիսամյակ		
1. Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքների աջակցելու նպատակով	Հայաստանում գործող արբիտրաժային կենտրոնների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց	Ձևավորվել է նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքներին աջակցող	Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքների գործընթացում	Արդարադատության նախարարությունը վարում է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման

<p>կապեր հաստատել միջազգային կազմակերպությունների, հեղինակավոր ընկերությունների, ներառյալ՝ արբիտրաժային կենտրոնների, մասնագետների հետ</p>	<p>աշխատանքներում, թե՛ որպես հիմնադիր, թե՛ որպես կառավարման մարմնի անդամ, թե՛ որպես արբիտր ներառված չեն միջազգային հեղինակություն վայելող մասնագետներ և կազմակերպություններ: Այնինչ, կայուն և հեռանկարային նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման շրջանակներում նման մասնագետների ներգրավումը կարող է էապես ապահովել ինչպես արբիտրաժային կենտրոնի բարձր հեղինակությունը, այնպես էլ դրա կողմից գործերի վարման և քննության որակն ու արդյունավետությունը: Ներկայումս նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքներին ներգրավված է միջազգային 1 գործընկեր՝</p>	<p>գործընկերների ցանկ, որի հիման վրա կանխորոշված են աջակցության շրջանակները և ուղղությունները</p>	<p>միջազգային լավագույն փորձի ներդրման, հեղինակավոր մասնագետների և արբիտրաժային կենտրոնների հետ կապերի ստեղծման, ինչպես նաև տեխնիկական աջակցություն տրամադրելու նպատակով ներգրավվել են առնվազն 4 միջազգային գործընկերներ</p>	<p>աշխատանքներում ընդգրկված միջազգային գործընկերների ցանկը</p>
---	---	---	--	--



	Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ)			
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
2. Ներպետական և տարածաշրջանային շահառու շրջանակների միջև Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման կապակցությամբ իրականացնել հարցումներ և կարիքի գնահատում	Ներկայումս արբիտրաժային կենտրոնն ըստ պահանջարկի ստեղծելու և դրա զարգացումն ու հաճախորդների շրջանակն ապահովելու տեսանկյունից հավանական շահառուների կարիքները գնահատված չեն	Մշակվել և շրջանառվել են հարցաթերթիկներ, որոնց արդյունքների հիման վրա հնարավոր է վեր հանել նոր արբիտրաժային կենտրոնի շահառուների կարիքները	2.1. Համապատասխան հարցումներն ուղարկվել են արտահանման և ներկրման ոլորտի հիմնական ընկերություններին, հիմնական խոշոր հարկատուներին, ֆինանսական ոլորտի, հանրային ծառայությունների ոլորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի, առողջապահության ոլորտի հիմնական	Արդարադատության նախարարությունը վարում է փաստաթուղթ, որում ամփոփված են իրականացված հարցումների բոլոր պատասխանները, ինչպես նաև հավաքագրված են կարիքները

			<p>կազմակերպությունների ն, աուդիտորական միջազգային ընկերություններին, առևտրային միություններին, որի հիման վրա հավաքագրվել և ամփոփվել են հարցվածների առնվազն 50 տոկոսի կարծիքները 2.2. Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնն ըստ պահանջարկի ստեղծելու և զարգացնելու համար կենտրոնի թիրախային շահառուների հիմնական կարիքների 80 տոկոսը բացահայտված և վերհանված է</p>	
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

		2022 թվականի 2-րդ կիսամյակ		
<p><b>3.</b> Հստակեցնել Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի տեսլականը՝ կանխորոշելով կենտրոնի կազմակերպարավակա ն ձևը, կառավարման համակարգը, ֆինանսական մոդելը (ֆինանսավորման աղբյուրներ, ծախսերի ուղղություններ և այլն)</p>	<p>Արբիտրաժային կենտրոնի հիմնադրման, դրա կայուն զարգացման ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է դրա ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներ իրականացնել կանխատեսելի հիմքի վրա՝ այդպիսի հիմնական աշխատանքների վերաբերյալ հստակ մոտեցումների առկայությամբ: Սակայն ներկայումս առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կսահմանի արբիտրաժային կենտրոնի հիմնադրման, դրա կայուն զարգացման ապահովման հիմնական ուղղությունները</p>	<p>Ուրվագծվել են Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման և զարգացման ուղղությունները, կանխորոշվել են դրա կազմակերպարավակա ն ձևը, կառուցվածքը, կառավարման համակարգը, ֆինանսական մոդելը</p>	<p>Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի տեսլականը արտացոլում է վեր հանված կարիքների առնվազն 70 տոկոսը</p>	<p>Արդարադատության նախարարությունում առկա է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման և զարգացման հիմնական ուղղությունները ուրվագծող փաստաթուղթը (փաստաթղթերը)</p>

<b>Պատասխանաբանություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<p><b>4.</b> Գործընկերների հետ համատեղ մշակել նոր արբիտրաժային կենտրոնի կանոնները և կենտրոնի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ այլ իրավական ակտերը, ներառյալ՝ կանոնադրությունը</p>	<p>Հայաստանում նոր ստեղծվող արբիտրաժային կենտրոնի պատշաճ գործունեության համար առկա է դրա իրավական ակտերի, ներառյալ՝ արբիտրաժային կանոնների մշակման անհրաժեշտություն, որոնք ներկայումս մշակված չեն</p>	<p>Մշակվել են նոր արբիտրաժային կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ իրավական ակտերը, ներառյալ՝ արբիտրաժային կանոնները</p>	<p>Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման և գործարկման նպատակով մշակվել են դրա կանոնադրությունը, առնվազն 2 կանոններ և այլ փաստաթղթեր (անհրաժեշտ փաստաթղթերի առնվազն 80 տոկոսը), որոնց միջոցով երաշխավորվում է նոր արբիտրաժային կենտրոնի գործունեությունը, դրա կողմից վարվող վարույթների պատշաճ իրականացումը</p>	<p>Արդարադատության նախարարության և գործընկերների կողմից մշակված Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ իրավական ակտերը հրապարակվել են Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում</p>

<b>Պատասխանաբանություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարկային և դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Տարեկան շուրջ 12 մլն ՀՀ դրամ՝ որպես ներգրավված փորձագետների վարձատրության գումար</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
5. Հիմնադրել նոր արբիտրաժային կենտրոն	<p>Ներկայումս Հայաստանում գործում են մի քանի արբիտրաժային կենտրոններ, որոնք առավելապես գործում են տեղական մակարդակով: Իր հերթին, այդ կենտրոնները քննում են առավելապես գումարի բռնագանձման վերաբերյալ վեճեր, որոնք մեծամասամբ ներկայացվում են ֆինանսական կազմակերպությունների կողմից</p>	Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնը հիմնադրվել է	<p>5.1. Հայաստանում գործում է ևս մեկ արբիտրաժային կենտրոն, որտեղ քննվում են տարածաշրջանային և տեղական առևտրային վեճեր</p> <p>5.2. Նոր արբիտրաժային կենտրոնի հիմնադրումից երկու տարվա ընթացքում փոքր հայցապահանջներով գործերի 30 տոկոսը լուծվում է արբիտրաժային կարգով նոր կենտրոնի կողմից</p> <p>5.3. Նոր արբիտրաժային կենտրոնի հիմնադրումից երեք</p>	Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնը գրանցված է իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում

			<p>տարվա ընթացքում առևտրային գործերով դատարանների ծանրաբեռնվածությունը նվազել է 20 տոկոսով՝ նոր արբիտրաժային կենտրոնին վերապահվող գործերի թվի աճի արդյունքում (աղբյուր՝ դատական դեպարտամենտի կողմից վարվող վիճակագրություն)</p> <p>5.4. Նոր արբիտրաժային կենտրոնի հիմնադրումից երկու տարի հետո գործում է տեղեկատվական տեխնոլոգիաների, ներդրումային, կորպորատիվ վեճերի արդյունավետ քննության հարթակ</p>	
<p><b>Պարասխանադրումներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

		2023 թվականի 2-րդ կիսամյակ		
<p><b>6.</b> Ապահովել Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ պայմանները, այդ թվում, շենքային պայմանները և տեխնիկական ապահովումը՝ գործերի էլեկտրոնային կառավարումն ապահովելու համար, այլ անհրաժեշտ վճարները և ծախսերը</p>	<p>Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ծրագրված գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտություն է առկա ապահովել դրա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շենքային և նյութատեխնիկական բավարար պայմանները,</li> <li>- գործերի էլեկտրոնային կառավարման համար անհրաժեշտ համակարգչային հարթակը,</li> <li>- աշխատակազմի վարձատրությունը,</li> <li>- անհրաժեշտ ծառայությունների համար վճարները</li> </ul>	<p>Ապահովվել են նոր արբիտրաժային կենտրոնի նյութական, ներառյալ՝ շենքային և նյութատեխնիկական այլ պայմանները</p>	<p>6.1. Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի հիմնադրումից մեկ տարի հետո այն ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների առնվազն 90 տոկոսով, ինչի արդյունքում ապահովվում են արբիտրաժային կենտրոնի բնականոն գործունեությունը և անխափան զարգացումը, գործերի պատշաճ քննությունը:</p> <p>6.2. Արբիտրաժային նոր կենտրոնի միջոցով ապահովվում է գործերի էլեկտրոնային կառավարումը, որի ներդրումից 1 տարի հետո կենտրոնի կողմից քննվող գործերի 50 տոկոսը գործի քննության տարբեր փուլերում (ներառյալ՝</p>	<p>Հայաստանում հիմնադրված նոր արբիտրաժային կենտրոնը գործում է պատշաճ շենքային պայմաններում, նյութատեխնիկական բավարար ապահովվածությամբ և կարող է գործերը քննել նաև էլեկտրոնային հարթակի միջոցով</p>

			<p>հայցի ներկայացման փուլը) կառավարվում են էլեկտրոնային համակարգի միջոցով 6.3. Նոր արբիտրաժային կենտրոնի աշխատակիցները ստանում են մրցունակ վարձատրություն, ինչն իր հերթին ապահովում է պատշաճ մասնագետների ներգրավումը արբիտրաժային կենտրոնի աշխատանքներին</p>	
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Երեք տարի անընդմեջ, յուրաքանչյուր տարի 490 մլն ՀՀ դրամ՝ ընդամենը 1 մլրդ 470 մլն ՀՀ դրամ, որը ներառում է նոր արբիտրաժային կենտրոնի աշխատակազմի աշխատավարձերը, անհրաժեշտ ծառայությունների համար վճարները, շենքային պայմանների, գրասենյակի պահման, կայքի մշակման, մարկետինգի, գործերի էլեկտրոնային կառավարման համակարգի և այլ անհրաժեշտ ծախսերը</li> </ul>			



		2022 թվականի 2-րդ կիսամյակ		
<p>7. Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծեր</p>	<p>Ներկայումս «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի և հարակից օրենքների առանձին կարգավորումներ կարիք ունեն վերանայման՝ արբիտրաժի ինստիտուտի արդյունավետության ապահովման նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> <li>- արբիտրաժի վճիռների չեղարկման և հակադիր կատարման վարույթները հաճախ օգտագործվում են իրավունքի չարաշահմամբ՝ նպատակ հետապնդելով ձգձգել և խոչընդոտել արբիտրաժային վարույթի իրականացումը և կատարումը,</li> <li>- արբիտրների շահերի բախման վերաբերյալ</li> </ul>	<p>Մշակվել են «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծեր</p>	<p>7.1. Օրենսդրական փոփոխությունների արդյունքում արբիտրաժի վճիռների չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման վարույթներով ժամկետները կրճատվել են շուրջ 30 տոկոսով</p> <p>7.2. Հստակեցվել են արբիտրների շահերի բախման օրենսդրական կարգավորումների շրջանակները</p>	<p>«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

	կարգավորումները ընդհանրական են, որպիսի դեպքում հաճախ հնարավոր չէ հստակ որոշել շահերի բախման իրական դեպքերը			
<b>Պարասխանագրու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> <li>• Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>8.</b> Մշակել «Հաշտարարության մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության հարակից օրենքներում, փոփոխություններ նախատեսող փաթեթ	Ներկայումս «Հաշտարարության մասին» օրենքում նախատեսված չեն. - առցանց հաշտարարության, - ընտանեկան գործերով վեճերով պարտադիր հաշտարարության (օրինակ՝ 2021 թվականի ընթացքում առաջին ատյանի ընդհանուր	Մշակվել է «Հաշտարարության մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության հարակից օրենքներում, փոփոխություններ նախատեսող նախագծերի փաթեթ	8.1. Հայաստանում ներդրվել և գործում է առցանց հաշտարարություն իրականացնելու համակարգ 8.2. Որոշ ընտանեկան գործերով իրականացվում է պարտադիր հաշտարարություն, ինչի արդյունքում պարտադիր հաշտարարության	«Հաշտարարության մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության հարակից օրենքներում, փոփոխություններ նախատեսող նախագծերի փաթեթը Կառավարությունը ներկայացվել է Ազգային ժողովում (Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ)

	<p>իրավասության դատարաններում ստացվել է 2819 ընտանեկան գործ, ինչը երբեմն անհարկի ծանրաբեռնում է դատական համակարգը) և - հաշտարարության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ այլ իրավական կառուցակարգեր:</p>		<p>ներդրումից հետո՝ երկու տարվա ընթացքում ընտանեկան գործերով մինչև 30 տոկոսով ավելացել է հաշտության դեպքերի քանակը, և 30 տոկոսով նվազել է դատարանների՝ ընտանեկան գործերով ծանրաբեռնվածությունը (աղբյուր՝ դատական դեպարտամենտի կողմից վարվող վիճակագրություն)</p> <p>8.3. Ընդհանուր առմամբ հաշտության իրականացման դեպքերի քանակը օրենսդրական բարեփոխումներից հետո՝ երկու տարվա ընթացքում ավելացել է մինչև 15 տոկոսով</p> <p>8.4. Գործում են նոր իրավակարգավորումներ հաշտարարական գաղտնիքի պահպանման, կողմերի հետ փոխկապակցվածության , հաշտարարների ինքնակարգավորվող</p>	
--	--	--	--	--

			կազմակերպության մարմինների, դրանց ձևավորման կարգի և լիազորությունների, հաշտարարների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ	
<b>Պատասխանաբար մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային և դրամաշնորհային միջոցներ</li> <li>Տարեկան շուրջ 6 մլն ՀՀ դրամ՝ պարտադիր հաշտարարության և դատարանի կողմից նշանակված հաշտարարության իրականացման դեպքերում՝ որպես հաշտարարների փոխհատուցման վճար</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>9.</b> Նախաձեռնել անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում ընդունել համապատասխան իրավական ակտեր՝ «Հաշտարարության մասին» օրենքի փոփոխությունների պատշաճ իրացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել նաև այլ միջոցառումներ՝ - ավելացնել Հայաստանում գործող հաշտարարների թիվը (ներկայումս գործում են	«Հաշտարարության մասին» օրենքում կատարված փոփոխությունների պատշաճ իրացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել նաև այլ միջոցառումներ՝ - ավելացնել Հայաստանում գործող հաշտարարների թիվը (ներկայումս գործում են	«Հաշտարարության մասին» օրենքում կատարված փոփոխությունների պատշաճ իրացումն ապահովելու նպատակով անխաճեռնվել են համապատասխան միջոցառումներ	9.1. Փաստացի գործող հաշտարարների թիվն ավելացել է մինչև 40 տոկոսով 9.2. Գործում են հաշտարարների որակավորման և վերապատրաստման նոր կարգ ու ծրագիր, որոնց հիման վրա օրենսդրական փոփոխություններից մեկ տարի հետո որակավորվել կամ	Ընդունվել են անհրաժեշտ ենթաօրենսդրական իրավական ակտերը (Պաշտոնական տեղեկագիր): Հաշտարարների ինքնակազմակերպվող կազմակերպությունը ընդունել է անհրաժեշտ իրավական ակտերը (Հաշտարարների ԻԿԿ կայք): Նոր հաշտարարների

	<p>որակավորում ունեցող 57 հաշտարարներ, ընդ որում. նրանց մի մասը փաստացի չի զբաղվում հաշտարարական գործունեությամբ),</p> <ul style="list-style-type: none"> <li>- վերանայել նոր հաշտարարների ներգրավման, ուսուցման, ռեեստրի վարման և ընտրության իրավական մեխանիզմները,</li> <li>- բավարար չափով կարգավորել հաշտարարների որակավորման և վերապատրաստման ընթացակարգերը,</li> <li>- հաշտարարների որակավորման և վերապատրաստման նպատակով մշակել մասնագիտական պատրաստման և վերապատրաստման նոր ծրագրեր,</li> <li>- կատարվող բարեփոխումների շրջանակներում համագործակցել հաշտարարների</li> </ul>		<p>վերապատրաստվել են առնվազն 30 հաշտարար</p>	<p>ուսուցման և որակավորման դասընթացների արդյունքները ամփոփվել են Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում: Նոր հաշտարարները հաշվառվել են Արդարադատության նախարարության ռեեստրում</p>
--	---	--	--	--

	<p>ինքնակարգավորվող կազմակերպության հետ՝ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից օրենքով սահմանված իրավական ակտերի ընդունումն ապահովելու նպատակով,</p> <p>- ներդնել հաշտարարների ռեեստրի վարման և վիճակահանությամբ գործերի բաշխման և այլ գործառույթների համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգ</p>			
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</li> <li>• Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպություն (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 10 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 10. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացում
- Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնում
- Անհատույց իրավաբանական օգնության (pro bono) տրամադրման կառուցակարգերի զարգացում
- Փաստաբանների որակավորման ընթացակարգերի վերանայում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Անձանց իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը մեծապես երաշխավորված է</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վերանայվել է փաստաբանների պալատի կառուցվածքը և կառավարման համակարգը</li> <li>2. Վերանայվել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու սուբյեկտների շրջանակը</li> <li>3. Ներդրվել են կամավոր անհատույց իրավաբանական օգնության (pro bono) մեխանիզմներ</li> <li>4. Առկա են փաստաբանների որակավորման տարբերակված ընթացակարգեր</li> <li>5. Առկա են փաստաբանների պալատի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկման վերաբերյալ արդյունավետ կառուցակարգեր</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1.1. Առավել կատարելագործվել են Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերը փաստաբանների պալատի ինքնավարության շրջանակներում</li> <li>1.2. Փաստաբանների կարգապահական պատասխանատվության գործերի 100 տոկոսը քննվում են հատուկ այդ նպատակով ստեղծված կոլեգիալ մարմնի կողմից</li> <li>1.3. Փաստաբանները հնարավորություն ունեն երկու մակարդակով բողոքարկելու կարգապահական վարույթի արդյունքում կայացված որոշումները</li> <li>2.1. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների խմբերը ավելացել են 3-ով</li> <li>2.2. Հանրային պաշտպանների թիվը ավելացել է առնվազն 10-ով</li> <li>3.1. Ներդրվել և գործում են pro-bono իրավաբանական օգնության</li> </ol>

		<p>կառուցակարգեր, որոնցից օգտվել են առնվազն 3000 քաղաքացիներ</p> <p>3.2. Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը թերևացել է մինչև 30 տոկոսով</p> <p>3.3. Փաստաբանների 10 տոկոսը ներգրավված է pro bono էլեկտրոնային հարթակում</p> <p>4.1. Փաստաբանների որակավորման քննության մասնակիցների առնվազն 20 տոկոսը որակավորումը ստացել է տարբերակված ընթացակարգով</p> <p>5.1. Առկա է Փաստաբանների պալատի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման ընթացակարգ, որը հնարավորություն է տալիս առավելագույնը 6-ամսյա ժամկետում լուծել գործի ընթացքը</p>
--	--	---

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2022 թվականի 2-րդ կիսամյակ		
1. Փաստաբանների պալատում ստեղծել կարգապահական հանձնաժողով, նախատեսել պալատի մարմինների, ինչպես	Ներկայումս. - փաստաբանների պալատում գործում է ընդամենը 2 մարմին՝ խորհուրդը և	Մշակվել է «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող	1.1. Առավել կատարելագործվել են փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերը Փաստաբանների	«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը



<p>նաև հանրային պաշտպանի գրասենյակի հաշվետվողականության բարձրացման մեխանիզմներ, սահմանել պալատի մարմինների անդամների և պաշտոնատար անձանց գործունեության անհամատեղելիության որոշ կանոններ, նրանց լիազորությունների դադարման և դադարեցման հիմքեր, վերանայել պալատի մարմինների անդամների ընտրության կարգը</p>	<p>որակավորման հանձնաժողովը  - փաստաբանների պալատի տարբեր գործառույթներ անհամաչափ են բաշխված դրա մարմինների և նախագահի միջև  - պալատի 1 մարմնի անդամը կարող է գործել տարբեր մարմիններում կամ պալատի պաշտոնատար անձը միաժամանակ կարող է հանդիսանալ դրա որևէ մարմնի անդամ  - պալատի մարմինների անդամների և նախագահի լիազորությունների դադարման և դադարեցման դեպքերը սահմանվում են պալատի կանոնադրությամբ, ինչը իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից խնդրահարույց է թվում  - պալատի մարմինների անդամների</p>	<p>իրավական ակտի նախագիծ</p>	<p>պալատի ինքնավարության շրջանակներում  1.2. Նոր մարմնի՝ կարգապահական հանձնաժողովի ձևավորումից 1 տարի հետո փաստաբանների կարգապահական պատասխանատվության գործերի 100 տոկոսը քննվում են հատուկ այդ նպատակով ստեղծված կոլեգիալ մարմնի կողմից  1.3. Փաստաբանները հնարավորություն ունեն երկու մակարդակով բողոքարկելու կարգապահական վարույթով կայացված որոշումները  1.4. Օրենքի փոփոխությունների ընդունումից մեկ տարի հետո փաստաբանների պալատում գործում են նոր ընթացակարգերով ձևավորված առնվազն երկու մարմին  1.5. Օրենքի փոփոխությունների</p>	<p>Կառավարությունը ներկայացրել է Ազգային ժողովում (Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ)</p>
--	--	------------------------------	--	--

	<p>վարկանիշային կարգով ընտրության դեպքում յուրքանջյուր ընտրող կարող է ձայն տալ այնքան թեկնածուի, որքան ընտրվող մարմնի անդամների թիվն է, ինչի հետևանքով այդ մարմիններում կարող է չապահովվել տարբեր շահերին հարող փաստաբանների ներկայացուցչությունը - օրենսդրորեն սահմանված չեն պալատի՝ որպես հանրային կարևոր ինստիտուտի հաշվետվողականության մեխանիզմներ հաշվետվություններ ներկայացնելու, զարգացման ծրագրեր մշակելու, տարեկան կատարողական ցուցանիշներ սահմանելու և այլ մեխանիզմներ</p>		<p>ընդունմանը հաջորդող հաշվետու տարվա համար մշակվել են պալատի մարմինների հաշվետվություններ, ինչպես նաև սահմանվել են հանրային պաշտպանի գրասենյակի զարգացման ծրագրեր և տարեկան կատարողական ցուցանիշներ</p>	
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			

<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	• Ֆինանսավորում չի պահանջվում			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<p><b>2.</b> Վերանայել անվճար իրավաբանական օգնություն ստանալու շահառուների շրջանակը</p>	<p>Ներկայումս. - «Փաստաբանության մասին» օրենքում նախատեսված է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների 17 խումբ, սակայն պետության կողմից անվճար իրավաբանական օգնության գործառույթի ապահովման տեսանկյունից առկա է այդ ցանկի վերանայման և ընդլայնման անհրաժեշտություն - անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների վերաբերյալ գործող կարգավորումները հնարավորություն չեն տալիս օբյեկտիվ գնահատել անձանց անվճարունակ լինելու հատկանիշը</p>	<p>Մշակվել է «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծ</p>	<p>2.1. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների խմբերը ավելացել են 3-ով և հաջորդ տարվա ընթացքում նոր խմբերի շուրջ 300 շահառու ստացել է անվճար իրավաբանական օգնություն 2.2. Նախատեսվել և գործում են անվճար իրավաբանական օգնություն ստանալու հարաբերություններում անձանց անվճարունակության չափերի հիմքեր և դրանց հավաստիության ստուգման կառուցակարգեր</p>	<p>«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը Կառավարությունը ներկայացրել է Ազգային ժողովում (Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ)</p>

<b>Պարասխանագրումարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>3. Ավելացնել հանրային պաշտպանների հաստիքների թիվը</b>	<p>Ներկայումս.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հայաստան Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքն ապահովվում է միայն փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով</li> <li>- հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը վերջին տարիներին յուրաքանչյուր տարի մեծանում է</li> <li>- նման աճ կանխատեսվում է նաև մոտակա տարիներն</li> </ul>	<p>Մշակվել է հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքների թվի ավելացման վերաբերյալ իրավական ակտի նախագիծ</p>	<p>Հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքների թիվը ավելացել է առնվազն 10-ով</p>	<p>Հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքների թվի ավելացման վերաբերյալ իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

<b>Պատասխանաբար մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե</li> <li>Տարեկան շուրջ 68 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>4. Նախատեսել կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման կառուցակարգեր</b>	«Փաստաբանության մասին» օրենքում առկա չեն pro bono իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ համապատասխան կառուցակարգեր, այդ թվում այդպիսի գործունեությունը խրախուսելու մեխանիզմներ	Մշակվել է «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծ	3.1. Ներդրվել և գործում են pro-bono իրավաբանական ծառայություններ, որոնցից երեք տարվա ընթացքում օգտվել են առնվազն 3000 քաղաքացիներ 3.2. Կառուցակարգերի ներդրումից հետո՝ երեք տարվա ընթացքում հանրային պաշտպանների ճանրաբեռնվածությունը թեթևացել է մինչև 30 տոկոսով	«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը Կառավարությունը ներկայացրել է Ազգային ժողովում (Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ)
<b>Պատասխանաբար մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			

<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	• Ֆինանսավորում չի պահանջվում			
		<b>2022 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<p><b>5.</b> Վերանայել փաստաբանների որակավորման ընթացակարգերը, այդ թվում՝ Փաստաբանական դպրոցում պարտադիր ուսուցման պահանջը</p>	<p>Ներկայումս օրենսդրորեն նախատեսված չեն փաստաբանների որակավորման տարբերակված ընթացակարգեր, այնինչ, 2020 թվականի ընթացքում փաստաբանական դպրոց ընդունվել է 221 ունկնդիր, որոնցից 40-ը հատուկ դիմորդի ուսուցման ծրագրով, այն է՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ ունեցող ունկնդիրները (18%): Այսպես, առկա է փաստաբանական համայնք մուտք գործող անձանց զգալի հատված, որոնց մասնագիտական կարգավիճակը որոշակիորեն տարբեր է, սակայն նրանց համար</p>	<p>Մշակվել է «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծ</p>	<p>Ընթացակարգերի ներդրումից հետո՝ մեկ տարվա ընթացքում փաստաբանների որակավորման քննության մասնակիցների առնվազն 20 տոկոսը որակավորումը ստացել է տարբերակված ընթացակարգով</p>	<p>«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը Կառավարությունը ներկայացրել է Ազգային ժողովում (Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ)</p>

	առկա չեն այդ կարգավիճակով պայմանավորված փաստաբանի որակավորման տարբերակված ընթացակարգեր			
<b>Պարասխանաթու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2025 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>6.</b> Նախատեսել փաստաբանների պալատի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները հատուկ վարույթի շրջանակներում դատական կարգով բողոքարկման ընթացակարգեր	Ներկայումս փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումները դատարանում բողոքարկվում են ընդհանուր կարգով, ընդ որում, առկա է նաև տեսական վեճ նման գործերի քաղաքացիական կամ վարչական դատարանին ենթակայության կապակցությամբ:	Փաստաբանների պալատի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների դատական կարգով բողոքարկման կապակցությամբ կարիքները վերհանված են և դրանց հիման վրա մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ կամ ուսումնասիրություն, որով արձանագրվում է	Օրենքի փոփոխությունների ընդունումից 1 տարի հետո փաստաբանների պալատի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների դատական բողոքարկման ընթացակարգը տևում է առավելագույնը 6 ամիս	Համապատասխան նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության

	<p>Արդյունքում կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կարգավիճակը, հատկապես, արտոնագրի գործողությունը դադարեցվելու դեպքում, երկար ժամանակ մնում է անորոշ՝ մինչև համապատասխան դատական ակտի կայացումը: Ուստի, փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի գործունեության արդյունավետության բարձրացման և ապահովման, ինչպես նաև դրա մարմինների որոշումների պատշաճ և ժամանակին կատարման կապակցությամբ առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման</p>	<p>փոփոխությունների անհրաժեշտության բացակայությունը</p>		<p>պաշտոնական կայքէջ), կամ փոփոխությունների անհրաժեշտությունը բացառող ուսումնասիրությունը առկա է Արդարադատության նախարարությունում</p>
--	---	---	--	--



	տեսանկյունից անհրաժեշտ է ուսումնասիրել նաև նման որոշումների՝ հատուկ վարույթի շրջանակներում դատական կարգով բողոքարկման հնարավորության նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով այդ գործընթացների առանձնահատկությունները			
<b>Պարասխանագրումարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2025 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
7. Նախատեսել pro bono իրավաբանական օգնության տրամադրման կառուցակարգերի խրախուսման նոր միջոցներ և դրանց պատշաճ տրամադրումն ապահովող այլ	«Փաստաբանության մասին» օրենքում կատարված, կամավոր անհատույց իրավաբանական օգնության կառուցակարգերի զարգացմանը միտված բարեփոխումներից և pro	pro bono իրավաբանական օգնության կառուցակարգերի զարգացման ուղղությունները վերհանված են և դրանց հիման վրա մշակվել է օրենսդրական	6.1. Կառուցակարգերի զարգացումից հետո երեք տարվա ընթացքում pro bono ծառայություններից օգտվել են առնվազն 6000 քաղաքացիներ 6.2. pro-bono հարթակի ներդրումից հետո՝ երեք	Համապատասխան նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ կամ

<p>միջոցներ, ինչպես նաև ստեղծել pro bono էլեկտրոնային հարթակ</p>	<p>bono իրավաբանական օգնության կառուցակարգերի ներդրումից հետո անհրաժեշտություն է առաջանալու ուսումնասիրել այդ կառուցակարգերի արդյունավետությունը և քայլեր ձեռնարկել դրանց հաջորդական զարգացումն ապահովելու ուղղությամբ՝ նախատեսելով ինչպես խրախուսման նոր կառուցակարգեր, այնպես էլ դրանց պատշաճ տրամադրման ապահովմանն ուղղված այլ մեխանիզմներ</p>	<p>փոփոխությունների նախագիծ կամ ուսումնասիրություն, որով արձանագրվում է փոփոխությունների անհրաժեշտության բացակայությունը</p>	<p>տարվա ընթացքում փաստաբանների 10 տոկոսը ներգրավված է pro bono էլեկտրոնային հարթակում</p>	<p>փոփոխությունների անհրաժեշտությունը բացառող ուսումնասիրությունը առկա է Արդարադատության նախարարությունում: Նախագծերի փաթեթի առկայության դեպքում ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>• Շուրջ 20 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

**ՆՊԱՏԱԿ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի ներդնում
- Հարկադիր կատարման ոլորտի օրենսդրության համակարգային վերանայում
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում
- Բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման և բռնագանձման գործընթացի օպտիմալացում
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստման և իրազեկման ապահովում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Բարձրացել է կատարողական վարույթի արդյունավետությունը, մեծապես երաշխավորված է դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի մաս հանդիսացող՝ դատական ակտերի կատարման իրավունքի, ինչպես նաև հարկադիր կատարման ենթակա այլ ակտերի հարկադիր կատարման կենսագործումը</p>	<p>1. Սահմանվել են հարկադիր կատարման ոլորտի, կատարողական վարույթների և կատարողական գործողությունների կատարման վերաբերյալ համապարփակ իրավակարգավորումներ</p> <p>2. Բարելավվել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մարդկային ռեսուրսները և տեխնիկական հագեցվածությունը</p> <p>3. Պարտապանի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապարգելադրման գործընթացների տևողությունը կրճատվել է, գործընթացն իրականացվում է հնարավոր առավելագույն ինքնաշխատ եղանակով</p>	<p>1.1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն իրականացվում է կազմակերպարարական և կառուցվածքային նոր մոդելով</p> <p>1.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ընդհանուր միջին աշխատավարձը բարձրացել է առնվազն 50 տոկոսով</p> <p>1.3. «Կատարողական վարույթի մասին» նոր օրենսդրության ընդունմամբ ինստիտուցիոնալ կարգավորման են ենթարկվել հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման բոլոր առանձնահատկությունները, հարկադիր կատարման ենթակա առնվազն 5 տարբեր բնույթի ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունները, ամրագրվել է ոչ դրամական պահանջների կատարմանն ուղղված առնվազն 1 լրացուցիչ միջոց և</p>

		<p>կատարողական վարույթի շրջանակում կիրառվող հարկադրանքի առնվազն 3 «փափուկ» միջոց</p> <p>1.4. Օրենքի ընդունումից 1 տարի հետո առնվազն 40 տոկոսով կրճատվել է կատարողական գործողությունների կատարման միջին ժամկետը</p> <p>1.5. Առնվազն 30 տոկոսով ընդլայնվել է կատարողական վարույթի շրջանակում էլեկտրոնային ծանուցման եղանակների և գործիքակազմի կիրառությունը</p> <p>2.1. Արդիականացվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամբողջ սերվերային հանգույցը, ձեռք են բերվել թվով 2 տվյալների կենտրոններ (data center), առնվազն 4 ցանցային կոմուտատորներ, առնվազն 4 ցանցային Fiber Channel կոմուտատորներ, ձեռք են բերվել առնվազն 2 անխափան սնուցման սարքեր, տվյալների պահպանման առնվազն 2 համակարգ, առնվազն 2 պահուստային սերվեր</p> <p>2.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի առնվազն 60 տոկոսը վերապատրաստվել է</p> <p>3.1. Պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապաարգելադրման գործընթացի միջին տևողությունը կրճատվել է առնվազն 50 տոկոսով և</p>
--	--	---

		առնվազն 80 տոկոսով իրականացվում է ինքնաշխատ եղանակով 3.2. Պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապասարգելադրման գործընթացի տևողությունը կրճատվել է առնվազն 50 տոկոսով
--	--	---

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2022 թվականի 4-րդ եռամսյակ		
1. Մշակել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի ներդրման հայեցակարգ	Ներկայումս. - Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը գործում է Արդարադատության նախարարության կազմում՝ որպես նախարարությանը ենթակա մարմին և ապահովում է Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը - հարկադիր կատարողների աշխատանքի վարձատրության	Իրականացվել են ոլորտային ուսումնասիրություններ՝ ուղղված Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կազմակերպարավակա ն կարգավիճակի արդյունավետության բարձրացմանը և մշակվել է համապատասխան բարեփոխումների հայեցակարգ	1.1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կազմակերպարավակա ն կարգավիճակի արդյունավետության բարձրացման հայեցակարգն արտացոլում է արձանագրված խնդիրների առնվազն 70 տոկոսի լուծման ուղիները	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի ներդրման հայեցակարգը առկա է Արդարադատության նախարարությունում

	<p>համակարգը կատարված աշխատանքի ծավալների կամ որակական ցուցանիշների հետ փոխկապակցված չէ - առկա է հարկադիր կատարողի աշխատանքի արդյունավետության բարձրացման, մոտիվացիոն գործիքակազմի ներդրման և հարկադիր կատարողի սոցիալական երաշխիքների շրջանակի ընդլայնման անհրաժեշտություն</p>			
<b>Պարասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին եռամսյակ</b>		
<b>2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության</b>	<p>Ներկայումս. - Հարկադիր կատարման</p>	<p>Մշակվել է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին»</p>	<p>2.1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում</p>	<p>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր</p>

<p>վերաբերյալ նոր օրենսդրության շրջանակներում ներդնել ծառայության նոր մոդել</p>	<p>ծառայության ոլորտի մի շարք հարցեր կարգավորվում են տարբեր իրավական ակտերով  - Մշակված հայեցակարգի հիման վրա անհրաժեշտություն է առաջանալու վերանայել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության վերաբերյալ օրենսդրությունը  - Մշակված հայեցակարգի հիման վրա անհրաժեշտություն է առաջանալու ամրագրել հարկադիր կատարողի աշխատանքի արդյունավետության բարձրացման, մոտիվացիոն գործիքակազմի ներդրման իրավական հիմքերը  - Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ընդհանուր միջին աշխատավարձը</p>	<p>օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն նախատեսող օրենսդրական փաթեթ</p>	<p>ընդհանուր միջին աշխատավարձը ելակետային դրության համեմատությամբ բարձրացել է առնվազն 50 տոկոսով  2.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության վերաբերյալ օրենսդրությունն առնվազն 80 տոկոսով համապատասխանեցվել է հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի ներդրման հայեցակարգով առաջադրված պահանջներին  2.3. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ընդհանուր միջին աշխատավարձը ելակետային դրության համեմատությամբ բարձրացել է առնվազն 50 տոկոսով  2.4. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր մոդելի</p>	<p>մոդելի ներդրմանն ուղղված օրենսդրական փաթեթը մշակվել է, ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
---	---	--	---	--

	139,640 ՀՀ դրամ է՝ այն պարագայում, երբ միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանում 2021 թվականի սեպտեմբերի տվյալներով կազմում է 201,740 ՀՀ դրամ		ներդրումից 1 տարի հետո անձնակազմում շուրջ 20 տոկոսով ավելացել է բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը	
<b>Պատասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Նոր մոդելով գործող հարկադիր ծառայության բյուջե, իսկ դրա անբավարարության դեպքում՝ համապատասխան համամասնությամբ պետական բյուջե</li> <li>Տարեկան մինչև 504 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>3.</b> Մշակել «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծ	Ներկայումս՝ - հստակեցված չեն հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման բոլոր առանձնահատկությունները, դրանցից յուրաքանչյուրի հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները առանձին	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը մշակվել է	3.1. Շահագրգիռ սուբյեկտների մասնակցությամբ կազմակերպվել է առնվազն 2 հանրային քննարկում 3.2. Ինստիտուցիոնալ կարգավորման են ենթարկվել հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման բոլոր	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է Կարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության



	<p>ինստիտուցիոնալ կարգավորման ենթարկված չեն</p> <ul style="list-style-type: none"> <li>- առկա է բռնագանձման ենթակա գույքի շրջանակն ընդլայնելու անհրաժեշտություն</li> <li>- բռնագանձման ենթակա կատարողական ծախսերի չափի որոշումը սահմանափակված է միայն գույքի արժեքի կամ բռնագանձվող գումարի չափով</li> <li>- առկա են կատարողական վարույթի կասեցման տարբերակված հիմքեր, կատարողական վարույթի կասեցման, ավարտի, կարճման հիմքերի և դրանց իրավական հետևանքների հստակեցման անհրաժեշտություն</li> <li>- առկա է կատարողական գործողությունների կատարման ժամկետների</li> </ul>		<p>առանձնահատկությունն էրը, հարկադիր կատարման ենթակա առնվազն 5 տարբեր բնույթի ակտերի՝ գումարի բռնագանձման պահանջով, պահանջատիրոջը գույքի հանձնում ենթադրող, երեխայի տեսակցության վերաբերյալ, աշխատանքում վերականգնելու պահանջով, վտարման պահանջով հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունն էրը</p> <p>3.3. Նախատեսվել են գույքի առնվազն 5 առանձին տեսակների՝ դրամական միջոցների, եկամուտների, շարժական գույքի, պարտապանի՝ այլ անձանց մոտ գտնվող գույքի և պարտապանի՝ այլ անձանց կողմից տնօրինվող եկամուտների</p>	<p>որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	---	--	--	--

	<p>նվազեցման անհրաժեշտություն - առկա է ոչ դրամական պահանջների կատարմանն ուղղված լրացուցիչ միջոցների ամրագրման անհրաժեշտություն - առկա է հարկադրանքի «փափուկ» միջոցների (հարկադիր կատարողի որոշմամբ հետախուզվող տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության հնարավորության սահմանափակումը, հետախուզվող ֆիզիկական անձանց և շարժական գույքի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը սահմանափակելը) ներդրման անհրաժեշտություն - առկա է կատարողական վարույթում ծանուցման եղանակների և գործիքակազմի</p>		<p>բռնագանձման առանձնահատկությունն երը 3.4. Կատարողական ծախսերի չափի հաշվարկման նոր մոդելի արդյունքում կատարողական վարույթի շրջանակում գանձվող ծախսերը առնվազն 50 տոկոսով ավելի համապատասխան են կոնկրետ կատարողական վարույթի շրջանակում իրականացված գործողություններին 3.5. Կատարողական վարույթի կասեցման, ավարտի, կարճման հիմքերը և դրանց իրավական հետևանքները հստակեցվել են 3.6. Օրենքի ընդունումից մեկ տարի հետո առնվազն 40 տոկոսով կրճատվել է կատարողական գործողությունների կատարման միջին</p>	
--	--	--	--	--

	<p>կատարելագործման անհրաժեշտություն</p>		<p>ժամկետը 3.7. Ամրագրվել է ոչ դրամական պահանջների կատարմանն ուղղված առնվազն 1 լրացուցիչ միջոց 3.8. Ներդրվել են կատարողական վարույթի շրջանակում կիրառվող հարկադրանքի առնվազն 3 «փափուկ» միջոցներ՝ հարկադիր կատարողի որոշմամբ հետախուզվող տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության հնարավորության սահմանափակումը, հետախուզվող ֆիզիկական անձանց և շարժական գույքի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը սահմանափակելը 3.9. Առնվազն 30 տոկոսով ընդլայնվել է կատարողական վարույթի շրջանակում</p>	
--	---	--	--	--

			էլեկտրոնային ծանուցման եղանակների և գործիքակազմի կիրառությունը	
<b>Պատասխանարու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 24 մլն ՀՀ դրամ (փորձագետների ներգրավման և հանրային քննարկումների կազմակերպման համար)</li> </ul>			
		<b>2022 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>4. Բարելավել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածությունը</b>	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տեխնիկական հագեցվածությունը բարելավման անհրաժեշտություն ունի: Մասնավորապես, առկա է սերվերային հանգույցների արդիականացման, պահուստային սերվերների ձեռքբերման, անհրաժեշտ տվյալների կենտրոններ (data	Ոլորտի մասնագետների ներգրավմամբ մշակվել և հաստատվել են տեխնիկական հագեցվածության բարելավման համար անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական բնութագրերը, նախաձեռնվել և համապատասխան ընթացք է ստացել դրանց ձեռքբերման գործընթացը	Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարիքների համար համակարգչային սերվերների գնման գործընթացը հայտարարվելուց 1 տարի հետո արդիականացվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամբողջ սերվերային հանգույցը, ձեռք են բերվել թվով 2 տվյալների կենտրոններ	Գնման հայտը և համապատասխան փաստաթղթերը առկա են

	center) ստեղծելու, բաժանարար կոմուտատորները փոխարինելու և արդիականացնելու, անխափան սնուցման և արխիվացման սարքավորումների և սերվերային հանգույցի անխափան գործարկման համար անհրաժեշտ այլ սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտություն		(data center), առնվազն 4 ցանցային կոմուտատորներ, առնվազն 4 ցանցային Fiber Channel կոմուտատորներ, ձեռք են բերվել առնվազն 2 անխափան սնուցման սարքեր, տվյալների պահպանման առնվազն 2 համակարգ, առնվազն 2 պահուստային սերվեր և սերվերային հանգույցի անխափան գործարկման համար անհրաժեշտ այլ սարքավորումներ	
<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 600 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>2023 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<b>5. Մշակել Հարկադիր կատարման ապահովման նոր օրենսդրական փաթեթ</b>	Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել՝	Հարկադիր կատարման ապահովման նոր օրենսդրական փաթեթը մշակվել է, սահմանված	5.1. Շահագրգիռ սուբյեկտների մասնակցությամբ կազմակերպվել է	Հարկադիր կատարման ապահովման նոր օրենսդրական փաթեթը ներկայացվել է

	<p>- Շտկել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» գործող օրենքի թերություններն ու բացթողումները</p> <p>- «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի կարգավորումները համապատասխանեցնել «Կատարողական վարույթի մասին» նոր օրենքի նախագծի կարգավորումներին</p> <p>- Բարձրացնել հարկադիր կատարման գործընթացի արդյունավետությունը</p> <p>- Ամրապնդել և ընդլայնել հարկադիր կատարողի սոցիալական երաշխիքները</p> <p>- Վերանայել հարկադիր կատարողի աշխատանքի վարձատրության և աշխատանքի խրախուսման արդյունավետ</p>	<p>կարգով շրջանառվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ</p>	<p>առնվազն 2 հանրային քննարկում</p> <p>5.2. «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի արձանագրված թերությունների ու բացթողումների առնվազն 90 տոկոսը շտկվել է</p> <p>5.3. «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» նոր օրենքը և «Կատարողական վարույթի մասին» օրենքի կարգավորումները 100 տոկոսով համապատասխանում են միմյանց</p> <p>5.4. Իրավական կարգավորման են ենթարկվել հարկադիր կատարողի աշխատանքի վարձատրության և աշխատանքի խրախուսման արդյունավետ գործիքակազմի կիրառման համար</p>	<p>Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
--	--	---	--	---

	գործիքակազմի կիրառման համար անհրաժեշտ իրավական հիմքերը		անհրաժեշտ իրավական հիմքերի առնվազն 90 տոկոսը 5.5. Առկա են Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ընդհանուր միջին աշխատավարձը ելակետային դրության համեմատությամբ առնվազն 50 տոկոսով բարձրացնելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը	
<b>Պարասխանալու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 24 մլն ՀՀ դրամ (փորձագետների ներգրավման և քննարկումների կազմակերպման համար)</li> </ul>			
		<b>2023 թվականի 4-րդ եռամսյակ</b>		
<b>6.</b> Օպտիմալացնել բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման և բռնագանձման գործընթացը	Ներկայումս՝ - պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապաարգելադրման, առևտրային բանկերին	Պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա՝ կատարողական վարույթի շրջանակում արգելադրման կամ բռնագանձման ենթակա դրամական միջոցների արգելադրման,	Պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապաարգելադրման գործընթացի միջին	Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում և առևտրային բոլոր բանկերում ներդրված են և գործում են պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա

	<p>արգելանքի և բռնագանձման վերաբերյալ հաղորդագրությունների ուղարկման, դրանց պատասխանների ստացման գործընթացը տևում է միջինում երկու շաբաթ - առկա է բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապարգելադրման, առևտրային բանկերին արգելանքի և բռնագանձման վերաբերյալ հաղորդագրությունների ուղարկման, դրանց պատասխանների ստացման գործընթացի տևողության կրճատման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն</p>	<p>բռնագանձման և ապարգելադրման գործընթացում ինքնաշխատ իրականացվող գործողությունների շրջանակը ելակետային դրության համեմատությամբ էականորեն ընդլայնվել է</p>	<p>տևողությունը ելակետային դրության համեմատությամբ կրճատվել է առնվազն 50 տոկոսով և առնվազն 80 տոկոսով իրականացվում է ինքնաշխատ եղանակով</p>	<p>դրամական միջոցների արգելադրման, բռնագանձման, ապարգելադրման գործընթացը ինքնաշխատ եղանակով իրականացնելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները և գործիքակազմը</p>
--	---	--	---	--



<b>Պատասխանատու մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 30 մլն ՀՀ դրամ</li> </ul>			
		<b>Թիրախն ըստ փուլերի</b>		
		<b>2024 թվականի 1-ին կիսամյակ</b>		
<p>7. Ապահովել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստումն ու իրազեկումը</p>	<p>Կատարողական վարույթի մասին համապարփակ իրավակարգավորումների սահմանման, կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի ընդլայնման, տեխնիկական նոր լուծումների մշակման և տեխնիկական հագեցվածության ապահովման առնչությամբ իրականացվող միջոցառումների արդյունավետությունն ու կենսագործումն ապահովելու համար առաջանալու է</p>	<p>Կազմակերպվել և անցկացվել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ և իրազեկվածության ապահովմանն ուղղված միջոցառումներ</p>	<p>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի առնվազն 60 տոկոսը վերապատրաստվել է՝ ըստ իրականացված բարեփոխումների ուղղությունների և աշխատակիցների գործառույթներին դրանց առնչության</p>	<p>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստման դասընթացի մոդուլները, ինչպես նաև վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության հարցումները առկա են Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում</p>

	<p>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստման անհրաժեշտություն՝ ըստ իրականացված բարեփոխումների ուղղությունների և աշխատակիցների գործառույթներին դրանց առնչության</p>			
<p><b>Պատասխանատու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>Պետական բյուջե, վարկային կամ դրամաշնորհային միջոցներ</li> <li>Շուրջ 15 մլն ՀՀ դրամ</li> </ul>			

**12. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Կատարողական մակագրության ինստիտուտի կատարելագործում և կիրառման ընդլայնում
- Նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի վերանայում
- Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտի մշակում
- «Փորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակում

Վերջնական արդյունք	Միջանկյալ արդյունքներ	Ուղղակի արդյունքներ
<p>Ապահովված է բարենպաստ միջավայր արդարադատության համակարգի ընդհանուր զարգացման համար՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Բարձրացել է նոտարական ինստիտուտի գործունեության արդյունավետությունը</li> <li>- Արդարադատության ակադեմիայի արդյունավետությունը բարձրացված է</li> <li>- Հայաստանում փորձագիտական գործունեության արդյունավետությունը բարձրացված է, ինչը դրական ազդեցություն է գործել դատական և այլ վարույթներում ապացուցման գործընթացի պատշաճ ապահովման վրա</li> </ul>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ներդրվել է նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով կատարողական մակագրության թերթի տրամադրման ընթացակարգ</li> <li>2. Վերանայվել են նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը</li> <li>3. Բարելավվել է Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող իրավական դաշտը</li> <li>4. Ներդրվել են փորձագիտական գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող կառուցակարգեր</li> <li>5. Սահմանվել են փորձաքննությունների իրականացման նկատմամբ վերահսկողական գործիքակազմեր</li> </ol>	<p>1.1. 1.1. Առկա են նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով վավերացված պայմանագրերի համար էլեկտրոնային եղանակով կատարողական մակագրության թերթի տրամադրման օրենսդրական հիմքեր</p> <p>1.2. Նոտարների կողմից տրամադրված կատարողական մակագրության թերթերի առնվազն 25 տոկոսը տրամադրվել է էլեկտրոնային եղանակով</p> <p>2.1. Սահմանվել են կարգապահական վարույթի արդյունքների հիման վրա վարույթ հարուցող անձի կողմից ընդունվող որոշումների պատճառաբանվածության, հիմնավորվածության, ինչպես նաև դրանց բովանդակությունը ներկայացվող պահանջները:</p> <p>2.2. Կարգապահական վարույթի արդյունքների հիման վրա վարույթ հարուցող անձի կողմից ընդունվող որոշումների 100 տոկոսը</p>

		<p>համապատասխանում է սահմանված օրինակելի ձևանմուշներին</p> <p>2.3. Գործում է նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները վարչական կարգով բողոքարկելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ինտիտուտի արդյունավետությունը վերահսկելու ընթացակարգ</p> <p>3.1. Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերին վերաբերող հարցերը կանոնակարգված են</p> <p>3.2. Գործում են Արդարադատության ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինների նոր գործունեության կարգ և լիազորություններ, քննությունների կազմակերպման, անցկացման և դրանց արդյունքների բողոքարկման նոր կարգավորումներ, ունկնդրին տարկետում տալու հնարավորություն</p> <p>3.3. Առնվազն 260 դատավորներ և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, առնվազն 390 դատախազներ, Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող առնվազն 700 անձինք, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար</p>
--	--	--

		<p>պաշտոն գրադեցնող առնվազն 25 անձինք վերապատրաստված են</p> <p>4.1. Հայաստանում գործող փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների 50 և ավելի տոկոսը գործում է օրենսդրությամբ դրանց կարգավիճակին ներկայացվող չափորոշիչներին համապատասխան</p> <p>4.2. Հայաստանում գործող փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների փորձագետների առնվազն 50 տոկոսի որակավորումը ստուգված է փորձագետի կարգավիճակին ներկայացվող օրենսդրական չափորոշիչներին համապատասխան</p> <p>4.3. Հայաստանում գործող փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների փորձագետների առնվազն 50 տոկոսը վերապատրաստված է փորձագետի կարգավիճակին ներկայացվող օրենսդրական չափորոշիչներին համապատասխան</p> <p>4.4. Հայաստանում գործող փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների 100 տոկոսը գործում է փորձաքննության կատարման ընթացքում կիրառվող միատեսակ մեթոդաբանական չափորոշիչների հաշվառմամբ</p> <p>5.1. Հայաստանում գործող փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների 100 տոկոսը գործում է փորձագետի պատասխանատվության</p>
--	--	---

		իրավական բարեփոխված կառուցակարգի կիրառմամբ 5.2. Դատական փորձաքննությունների 100 տոկոսը կատարվում է դրանց կատարման համար սահմանված ողջամիտ ժամկետների որոշման չափանիշների հաշվառմամբ
--	--	--

Գործողություն	Բազային ցուցանիշ (ելակետային դրություն)	Թիրախն ըստ փուլերի	Թիրախային ցուցանիշ (արդյունք)	Ստուգման միջոց (տեղեկատվության հավաքագրման աղբյուր)
		2023 թվականի 2-րդ կիսամյակ		
1. Կատարելագործել և ընդլայնել կատարողական մակագրության ինստիտուտի կիրառումը	Ներկայումս նոտարի կողմից կատարողական մակագրության թերթը էլեկտրոնային եղանակով տրամադրելու իրավական հնարավորություն առկա չէ, ինչը խոչընդոտում է նոտարի կողմից կատարողական մակագրության թերթի տրամադրման ինստիտուտի զարգացմանը	Մշակվել է «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծ	1.1. Գործում է նոտարների կողմից վավերացված պայմանագրերի համար էլեկտրոնային եղանակով կատարողական մակագրության թերթ տրամադրելու հնարավորություն 1.2. Օրենսդրական փոփոխությունների ընդունումից և տեխնիկական հնարավորության ներդնումից հետո 1 տարվա ընթացքում նոտարների կողմից տրամադրվող կատարողական	«Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)

			մակագրության թերթերի 25 տոկոսը տրամադրվել է էլեկտրոնային եղանակով	
<b>Պատասխանաբազմ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Նոտարական պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b>		
<b>2. Վերանայել նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը</b>	Ներկայումս. - «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու Նոտարական պալատի վարչության որոշումները վարչական վերադատության կարգով բողոքարկելու հնարավորությունը, ինչը կարող է նպաստել նոտարների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի	Մշակվել է «Նոտարիատի մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթ	2.1. Օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո կարգապահական վարույթի արդյունքների հիման վրա վարույթ հարուցող անձի կողմից որոշումների առնվազն 90 տոկոսը ընդունվում են սահմանված պատճառաբանվածությամբ և հիմնավորվածության պահանջների պահպանմամբ 2.2. Կարգապահական վարույթի արդյունքների հիման վրա վարույթ	«Նոտարիատի մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության

	<p>արդյունավետության բարձրացմանը և դատարանների՝ նման գործերով ծանրաբեռնվածության նվազեցմանը  - կարգապահական վարույթի արդյունքների հիման վրա վարույթ հարուցող անձի կողմից ընդունվող որոշումների համար սահմանված չեն օրինակելի ձևանմուշներ, ինչպես նաև բացակայում են որոշման հիմնավորվածության և պատճառաբանվածության մասին պահանջները</p>		<p>հարուցող անձի կողմից ընդունվող որոշումները ընդունվում են օրինակելի ձևանմուշների հիման վրա  2.3. Գործում է նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները վարչական վերադատության կարգով (Արդարադատության նախարարության շրջանակներում) բողոքարկելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ինտիտուտի արդյունավետությունը վերահսկելու ընթացակարգ</p>	<p>պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Նոտարական պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			
		<p><b>2023 թվականի 2-րդ կիսամյակ</b></p>		



<p><b>3.</b> Կերանայել նոտարների պատասխանատվության ապահովագրության համակարգը</p>	<p>Նոտարների պատասխանատվության ապահովագրության ինստիտուտը նոտարների հետ իրավահարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության կարևոր նախադրյալներից և եղանակներից մեկն է՝ հաշվի առնելով նոտարների կողմից որոշակի պետաիշխանական գործառույթների իրականացումը: Սակայն ներկայումս, օրինակ սահմանված չեն նման պատասխանատվության ստանդարտներ</p>	<p>Մշակվել է «Նոտարիատի մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթ</p>	<p>Նախատեսված և գործում են նոտարների պատասխանատվության ապահովագրության հստակ ստանդարտներ</p>	<p>«Նոտարիատի մասին» օրենքում և, ըստ անհրաժեշտության, այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Կարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Նոտարական պալատ (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

		2023 թվականի 1-ին եռամսյակ		
<p><b>4.</b> Մշակել Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտ</p>	<p>Ներկայումս գործող «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքն ընդունվել է 2013 թվականին և, կապված պետական ու հասարակական կյանքում տեղի ունեցած և շարունակվող բարեփոխումների հետ՝ այն կարիք ունի էական փոփոխությունների: Այս համատեքստում անհրաժեշտ է օրենքը համադրելի դարձնել այժմյան զարգացումներին և գործող օրենսդրությանը: Մասնավորապես, օրենքի կիրարկման արդյունքում ի հայտ են եկել Արդարադատության ակադեմիայում ուսումնական գործընթացին առնչվող հարաբերություններն իրավական փակուղի</p>	<p>Մշակվել Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտի և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերի նախագծերի փաթեթ</p>	<p>3.1. Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերին վերաբերող հարցերը կանոնակարգված են 3.2. Գործում են Արդարադատության ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինների նոր գործունեության կարգ և լիազորություններ, քննությունների կազմակերպման, անցկացման և դրանց արդյունքների բողոքարկման նոր կարգավորումներ, ունկնդրին տարկետում տալու հնարավորություն 3.3. Օրենսդրական փոփոխություններից 3 տարի հետո առնվազն 260 դատավորներ և դատավորների</p>	<p>Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտի և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերի նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

	<p>տանող խնդիրներ՝ կապված ունկնդիրների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերին վերաբերող հարցերի, Ակադեմիայի կառավարման և ղեկավարման մարմինների գործունեության կարգն ու լիազորությունները սահմանող կարգավորումների, քննությունների կազմակերպման, անցկացման և դրանց արդյունքների բողոքարկման հարաբերությունների կարգավորումների, ունկնդրին տարկետում տալու կարգավորման բացակայության հետ և այլն</p>		<p>թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, առնվազն 390 դատախազներ, Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող առնվազն 700 անձինք, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող առնվազն 25 անձինք վերապատրաստված են</p>	
<p><b>Պարասխանարու մարմին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Արդարադատության նախարարություն</li> <li>• Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)</li> </ul>			
<p><b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

		2023 թվականի 2-րդ կիսամյակ		
<p>5. Մշակել «Փորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծ</p>	<p>Ներկայումս առկա չէ փորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող օրենք, ինչպիսի պայմաններում փորձաքննությունների իրականացման հետ կապված իրավահարաբերություններն ամբողջական և համապարփակ կերպով կարգավորված չեն</p>	<p>Մշակվել է «Փորձագիտական գործունեության մասին» օրենքի և, ըստ անհրաժեշտության, հարակից իրավական ակտերի նախագծերի փաթեթ</p>	<p>4.1. Նախագծերի փաթեթի ընդունումից 1 տարի հետո փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների 50 և ավելի տոկոսը գործում է օրենսդրությամբ դրանց կարգավիճակին ներկայացվող չափորոշիչներին համապատասխան</p> <p>4.2. Օրենսդրական փոփոխություններից 2 տարի հետո փորձաքննություններն իրականացվում են միատեսակ չափորոշիչներով որակավորված և վերապատրաստված՝ գործող փորձագետների առնվազն 50 տոկոսի կողմից</p> <p>4.3. Օրենսդրական փոփոխություններից 1 տարի հետո</p>	<p>«Փորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ Ընդունվել է օրենսդրական նախաձեռնությանը հավանություն տալու մասին Կառավարության որոշում (Կառավարության պաշտոնական կայքէջ)</p>

			<p>փորձագիտական կազմակերպությունների և այլ միավորների առնվազն 50 տոկոսը գործում է փորձագետի անկախության միատեսակ չափանիշներով</p> <p>4.4. Մեթոդաբանական չափորոշիչների ընդունումից 2 տարի հետո դրանց տիրույթում գտնվող փորձաքննությունների 100 տոկոսն իրականացվում է այդ չափորոշիչների հաշվառմամբ</p> <p>4.5. Գործող դատավարական ընթացակարգերին զուգահեռ գործում է փորձագետի կարգապահական պատասխանատվության իրավական ընթացակարգ, ինչի շնորհիվ օրենսդրական փոփոխությունների</p>	
--	--	--	---	--

			<p>ընդունումից 2 տարի հետո առնվազն 20 տոկոսով նվազել են լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման դեպքերը 4.6. Դատական փորձաքննությունների 100%-ը կատարվում են դրանց կատարման համար սահմանված ողջամիտ ժամկետների որոշման չափանիշների հաշվառմամբ</p>	
<b>Պատասխանատու մին</b>	<ul style="list-style-type: none"> <li>Արդարադատության նախարարություն</li> <li>Փորձագիտական կազմակերպություններ և այլ միավորներ (համաձայնությամբ)</li> </ul>			
<b>Ֆինանսավորման աղբյուր և չափ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆինանսավորում չի պահանջվում</li> </ul>			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ